Ազգ

AZG
armenian newspaper

Սեպտեմբեր 18. 1991,
Հորեքշաբթի
եռօրեայ թերթ.
Ա տարի. թիւ 62
գինը՝ 30 կ.

հասցէ՝ Երեւան 375010
Դանիելեանցի 47
հեռախօս՝ 581841
ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243267 SULA SU

Բաքվի, Երեւանի, Թբիլիսիի եւ Սանկտ-Պետերբուրգի բաղաքագլուխները հանդիպելու են

Աշնանը Սանկտ-Պետերբուրգում նախատեսվում է հրավիրել Բաքվի, Երեւանի, Թբիլիսիի եւ Սանկտ-Պետերբուրգի քաղաքագլուխների առանձին խորհրդակցական հանդիպում: Այդ միտքը հանդիպում անցկացնելու նախաձեռնությամբ հանդես եկավ Սանկտ-Պետերբուրգի քաղաքագլուխ Անատոլի Սոբչակը: Ինչպես հաղորդեցին «ԻՏԱ»ի թղթակցին քաղաքապետարանի մամլո կենտրոնում, այդ գաղափարը Անդրկովկասյան մայրաքաղաքների քաղաքապետարաններում սացել է դրական արձագանք: Սպասվում է, որ հանդիպման ժամանակ կքննարկվեն այդ քաղաքների միջեւ կայուն տնտեսական փոխհարաբերություններ հաստատելու խնդիրները: Չի բացառվում, որ Սոբչակն այդ հանդիպման ընթացքում կարող է որպես միջնորդ հանդես գալ հայ-ադրբեջանական կոնֆլիկտի կարգավորման գործում: ■

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌԱԿը թիկունք կը կանգնի Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութեան

Յառաջիկայ հոկտեմբեր 16-ին պիտի կայանայ Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւնը:

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցութեան Հիմնադիր խորհուրդը վերջին. շաբաթներուն հարցազրոյցներ ունեցաւ նախագահական բոլոր թեկնածուներուն հետ, ճանչնալու համար իւրաքանչիւրին քաղաքական փլաթֆորմը, գաղափարական կեցուածքը, ինչպէս նաեւ Հայաստանի տնտեսական զարգացման համար պատրաստուած ծրագիրը, եւ այլն:

Հիմնուելով յիշեալ խորհրդակցութիւններու տուեալներուն վրայ, մանաւանդ նկատի ունենալով Հայաստանի Գերագոյն խորհուրդի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի վարքագիծը՝ իբրեւ ոռեվիզայ Հայաստանի ժողովրդավարական շարժման եւ մանաւանդ նկատի ունենալով անոր խոհեմ ու վարչագետ քաղաքականութիւնը՝ Ռամկավար ազատական կուսակցութիւնը որոշեց թիկունք կանգնիլ անոր թեկնածութեան:

Իբրեւ խիզախ անձնաւորութիւն, Լեւոն Տէր-Պետրոսեան անվեհեր կերպով տարաւ Հայաստանի մէջ ժողովրդավարութիւնը վերահաստատելու ազնիւ պայքարը:

Իսկ վերջին մէկ տարուան ընթացքին, աշխարհացունց դէպքեր եկան յեղաշրջելու ամբողջ Խորհրդային Միութիւնը, խորունկ անդրադարձներ ունենալով Հայաստանի կեանքին վրայ: Իսկ Արցախի տագնապով աւելի արիւնալի դարձաւ քաղաքական այս անդրադարձը:

Այս բոլոր իրադարձութիւններուն մէջ, Լեւոն Տէր-Պետրոսեան ցուցաբերեց հեռատես, խոհեմ եւ իմաստուն քաղաքականութիւն մը, ամրապնդելով Հայաստանի ժողովրդին վստահութիւնը անոր նկատմամբ եւ բարձրացնելով անոր վարկը միջազգային քաղաքական շրջանակներուն մէջ:

Այսօր Լեւոն Տէր-Պետրոսեան դարձած է նախագահութեան համազգային թեկնածուն:

Ճիշտ է թէ սփիւռքի հայութիւնը չի կրնար գործնապէս մասնակցիլ քուէարկութեան, սակայն իբրեւ բարոյական քաղաքացիներ մայր հայրենիքին՝ իւրաքանչիւր սփիւռքահայ իրաւունքը ունի իր կարծիքն յայտնելու եւ թիկունք կանգնելու այն թեկնածուին, որ կը խտացնէ հայ ժողովուրդի իղձերը եւ կը խորհրդանշէ հայրենակերտումի ապագայով ուղին:

Արտայայտելով սփիւռքահայ զանգուածներուն զգացումները՝ Ռամկավար ազատական կուսակցութիւնը այսօր կու գայ պաշտօնապէս կոչելու կանգնիլ Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ խրախուսելով հայրենի ժողովուրդը, որ իր քուէները կեդրոնացնէ Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութեան վրայ:

Ի խնդիր արագ եւ ապահով վերակերտումի, ժողովրդական կարգերու ամրապնդման եւ ի խնդիր ազատ նախաձեռնութեան եւ պայծառ ու բարեր ապագայի՝ ամէնքս Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ:

ՌԱԿ Կեդրոնական Վարչութիւն
15 Սեպտեմբեր. 1991

Յավլինսկին առաջարկում է ճանաչել Միության բոլոր սուբյեկտների անկախությունը

Սեպտեմբերի 16-ին Մոսկվայում սկսվեց երկրի Պետական խորհրդի նիստում որոշվեց, որ մինչեւ սեպտեմբերի վերջը պետք է ընդունվի սննդամթերքով ապահովելու եւ գյուղատնտեսությունում «արմատական բարեփոխումներ» կատարելու օպերատիվ գործողությունների մասին առանձին տնտեսական պայմանագիր:

Արտասահմանում պարենի գնումները կիրականացվեն տարբեր արտաքին առեւտրական կազմակերպությունների միջոցով:

Պետխորհրդի նիստում քննարկվում էր միջհանրապետական տնտեսական պայմանագրի մասին հարցը:

Հայտնի խորհրդային տնտեսագետ Գրիգորի Յավլինսկին հայտարարեց, որ տնտեսական միության պայմանագրի գլխավոր կետը է՝ ճանաչել Միության բոլոր սուբյեկտների անկախությունը, իսկ այս փաստաթղթի գլխավոր նպատակն է ստեղծել ընդհանուր շուկա, եւ ի վերջո դուրս գալ ճգնաժամից:

Նախատեսվում է մտցնել ընդհանուր վայրուտա: Դա նշանակում է, որ ամեն մի հանրապետություն իրավունք ունի ունենալու սեփական վայրուտա, սակայն անհրաժեշտ է ստեղծել բանկային միություն Ֆեդերալ պահեստային համակարգի նման եւ մշակել Խորհրդային Միության տարածքում հանրապետական վայրուտաների մտցման եւ փոխանակման ընդհանուր կանոնները, Ֆինանսական վարկերի եւ պայմանագրերի բնագավառում առաջարկվում է վարել ընդհանուր քաղաքականություն եւ համաձայնեցնել բյուջետային դեֆիցիտի լուծման խնդիրը:

Պետխորհուրդը որոշեց հիմք ընդունել տնտեսական միության մասին պայմանագրի նախագիծը: Գ. Յավլինսկու խոսքերով, հանրապետությունների լիազորված պատվիրակությունը երկու շաբաթվա ընթացքում կմշակի փաստաթղթի տեքստի վերջնական տարբերակը: Սպասվում է մի շարք սկզբունքային լրացումների քննարկում, բայց գլխավորն այն է, որ *«սկսվում է կոնկրետ աշխատանք, որը, դատելով այսօրվա քննարկումից, կլինի բավականին ծանր»*:

Նրա խոսքերով, նախագծի ամենաուժեղ քննադատողներից մեկը Կրզըզստանի նախագահ Ասկար Ակաեւն էր: Նա մասնավորապես առաջարկեց ստեղծել Եւրոպայի եւ Ասիայի պետությունների տնտեսական միություն եւ նոր միայն, այդ միությունը հիմք ընդունելով, վերաքննարկել պայմանագրի նախագիծը: Սակայն այդ առաջարկությունը չընդունվեց Պետխորհրդի անդամների կողմից:

Գրիգորի Յավլինսկին նշեց, որ աշխատանքը ամբողջությամբ պետք է ավարտվի 3–4 ամիս հետո: ■

Լուսանկարը՝ ՍՊՄԵՆԴԵՍ, հատուկ «Ազգ»ի համար

«Մինչեւ 1992 թվականը Հայաստանում սով չի լինի»

Այսպես հայտարարեց հանրապետության առեւտրի նախարարի պաշտոնակատար Ռազմիկ Դանիելյանը երեկ կեսօրին տեղի ունեցած մամլո ասուլիսում: Նշելով, որ մինչ իր նշանակումը հանրապետության մթերապահեստներում եւ խանութներում եղել է դատարկություն, նախարարը հաղորդեց, թե այժմ սառույցը կոտրվել է, եւ արդեն համատեղ ջանքերով համաձայնագրեր են կնքվել Ուկրաինայի, Լատվիայի, Լիտվայի եւ այլ հանրապետությունների հետ: Ըստ նախնական պայմանավորվածության, Ուկրաինան Հայաստան կուղարկի 53 հազար տոննա շաքար, Ռուսաստանը՝ 20 հազար տոննա: Հազար տոննա կտրվի արտասահմանից ստացվող շաքարի ֆոնդից: Հանրապետությանը հասանելիք 27.396 տոննա կարագից ստացվել է միայն 6.425 տոննա: Շուտով կը-ստացվի եւս 512 տոննա: Միութենական առեւտրի նախարարությունը Հայաստան կուղարկի 10 մլն. ռուբլու ամերիկյան ծխախոտ:

Համաձայնագրեր են կնքվել նաեւ Վիլնյուսից 200 տոննա կարագ եւ Ռիգայից 200 տոննա միս ստանալու վերաբերյալ: Հաջողվել է նաեւ արտասահմանից ստացվող ֆոնդերից 42 մլն. ռուբլու կոկեղեն, 50 մլն. ռուբլու տնտեսական ապրանքներ, 15 մլն.-ի կահույք եւ այլ ապրանքների ներմուծման պայմանագիր ստորագրել:

Նախարարը խոսեց նաեւ «փողոցային առեւտրի» մասին, նշելով, որ թեեւ ինչը դեմ է դրան, սակայն ճշմարտություն է նաեւ այն, որ փողոցներում վաճառվող ապրանքները հանրապետությունը կենտրոնացված ֆոնդերով չի ստացել: Այնուհետեւ նա հավաստիացրեց, թե ձեռնարկվող միջոցառումները թույլ կտան դուրս գալ ճգնաժամից, մեծ ուշադրություն կդարձվի աղեսի գոտու եւ սոցիալապես ինչ ապահովված բնակչությանը, կմշակվեն ապրանքների բաշխման նոր ձեւեր, մեծ ուշադրություն կդարձվի կադրային քաղաքականությանը: ■

Ելցինը պատրաստվում է մեկնել Արցախ, Գորբաչո՞վը նույնպես

ԽՍՀՄ նախագահին հանձնարարված է հրամանագիր հրապարակել ԼՂԻՄ-ի խընդրի կարգավորման վերաբերյալ: Պետական խորհուրդը որոշում ընդունեց առաջարկել ԽՍՀՄ նախագահին հրամանագիր հրապարակել, որը բաղկացած կլինի 5 կետից: Ինչպես հաղորդում է «ԻՏԱ»ի թղթակիցը, հրամանագրում խոսք կգնա ԼՂԻՄ-ի խորհուրդների եւ իշխանության այլ տեղական մարմինների վերականգնման անհրաժեշտության, զորքերի դուրս բերման, երկու կողմերի զինված սպորտաժանումների ընդդիմության դադարեցման մասին: Դրա հետ մեկտեղ նշվում է Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների բարի կամքի առկայության անհրաժեշտությունը:

Ինչպես երեկ հաղորդեց «Վեստի»ն, Պետխորհրդում որոշվել է, որ Բորիս Ելցինը մոտակա օրերին կմեկնի Արցախ՝ վերականգնելու խորհրդային իշխանությունը եւ դադարեցնելու արյունահեղությունը: Պետխորհուրդը երաշխավորել է, որպեսզի Գորբաչովը նույնպես մեկնի Արցախ:

Իսկ ինչպես հաղորդեցին Ադրբեջանի Գերագույն խորհրդի մամլո կենտրոնում, կազմալուծվում է ԼՂԻՄ-ի հանրապետական կազմկոմիտեն: Դրա փոխարեն ստեղծվում է Ադրբեջանի կոորդինացիոն խորհուրդ, որի մեջ կմտնեն խորհրդարանի տարբեր խմբավորումների ներկայացուցիչները:

Մինչդեռ ընդհարումները ադրբեջանական օմոնի եւ հայ մարտիկների միջեւ շարունակվում են: Ադրբեջանի ՆԳՆ տեղեկությունների համաձայն, սեպտեմբերի 16-ին հայ գրոհայինները հարձակվել են Հադրութի շրջանի Ծամձոր գյուղի վրա, վիրավորվել է մեկ միլիցիոներ: Նրանց մամլո կենտրոնի ներկայացուցչի խոսքերով, հայ գրոհայինների շարքերում իբր թե գտնվում են Սիրիայի, Լիբանանի եւ Ֆրանսիայի քաղաքացիներ: Ադրբեջանի նախագահի օգնական Օսման Միրզոեւը հայտարարեց, որ հանրապետության ղեկավարությունը մրցահոգված է հայ-ադրբեջանական կոնֆլիկտի գոտում լարվածության աճով: Նա ոչ հաստատեց, ոչ էլ ժխտեց ԼՂԻՄ-ի նկատմամբ Ադրբեջանի դիրքորոշումը վերանայելու հնարավորությունը: ■

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

ԱՄՆ-ի նախագահ Բուշը եւ Գերմանիայի կանցլեր Քոլը հանդիպեցին Վաշինգտոնում: Նրանք քննարկեցին Խ. Միությանն օգնություն ցույց տալու հարցերը: Երկու ղեկավարները համաձայնվեցին, որ անհրաժեշտ է արագ ապահովել մարդասիրական օգնությունը, սակայն հրաժարվեցին հավանություն տալ արեւմտյան լիակատար օգնության ծրագրին, մինչեւ չիրագործվեն տնտեսական բարեփոխումները ԽՍՀՄ-ում:

ԱՄՆ-ի պետքարտուղար Բեյքերը եւ Իսրայելի ղեկավարները Երուսաղեմում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ չկարողացան լուծել ԱՄՆ-ի կողմից Իսրայելին տրամադրվող վարկերի հետ կապված վեճը: Ժողովուրդը լուսիկներ շպրտեց Բեյքերի շարժախմբի վրա, երբ նա քաղաք էր մտնում, արտահայտելով երկու երկրների միջեւ վերջին օրերին ստեղծված հակամարտությունը:

Իրանը պայմաններ է ներկայացրել կապված ՄԱԿ-ի ուղղաթիռների թռիչքների հետ, որոնք փնտրում են Իրանի կենսաբանական, քիմիական եւ միջուկային զենքերը, թույլ չտալով ուղղաթիռների թռիչքը Բաղդադի վրայով: ԱՄՆ-ն այդ պայմանները համարեց անընդունելի: Դրանից զատ Իրանը Քուվեյթին վերադարձրեց պատերազմի ժամանակ գողացված գանձերը: ■

digitised by A.R.A.R.@

Մարտեր Շահումյանի շրջանում

Սեպտեմբերի 17-ի առավոտյան ադրբեջանական կողմից ուժեղ հրաձգություն սկսվեց Ղարաչինար գյուղի վրա: Հայկական կողմը չէր պատասխանում: Մոտավորապես ժամը 11-12-ի կողմերը հրաձգությունը դադարեց: Որոշ ժամանակ անց նոր հրաձգություն սկսվեց ադրբեջանաբնակ Շեֆեկ գյուղի կողմից՝ նորից դեպի Ղարաչինար: Այս անգամ հայկական կողմը ստիպված էր պատասխանել: Մինչեւ երեկոյան ժամը 21-ը մարտը դեռ շարունակվում էր: Հայկական կողմից սպանված է մի հոգի: Այնուհետեւ Թողանի կողմից հրաձգություն է սկսվել Վերիշենի եւ Մանաշիսի ուղղությամբ: ■

Օպերա, Օպերա...

Մարդիկ վերջին տարիներին կորցրել են հետաքրքրությունը օպերային արվեստի նկատմամբ, գրեթե անտարբեր դարձել: Ինչո՞ւ: Մեղքը փոքրկոս ժամանակի՞նն է, թե՞ այդ գործի պատասխանատուներինը: Այս մասին է խորհում հեղինակը:

Չէ՛, խոսքը մեծանուն գրող Ուիլյամ Սարոյանի համանուն պիեսի մասին չէ, ոչ էլ բատերաերաժշտական այս ժանրի մասին ընդհանրապես: Այլ, կաղված բատերաշրջանի բացման հետ, Երևանի օպերայի եւ բալետի թատրոնին առնչվող կարեւոր խնդիրներից մեկի շուրջ:

Բանն այն է, որ հիշյալ թատրոնի այս խաղաշրջանի անդրանիկ ներկայացումը եւս «Անուշ»-ը, չնայած ստեղծագործական ողջ կազմի կատարման բարձր մակարդակին, անցավ կիսադատարկ դահլիճում, չվերածվելով արվեստի իսկական տոնի: Ընդհանրապես վերջին տարիներին մեր հանդիսատեսը մի տեսակ դժվարությամբ է հաճախում այս թատրոնը: Վերջինս, մեղմ ասած, չի ձգում նրան: Եւ սա այն դեպքում, երբ 1988-ի փետրվարից սկսած «օպերա» հասկացությունը բոլորիս համար ձեռք բերեց նոր իմաստ ու բովանդակություն: Հարյուր հազարավոր մարդիկ էին հավաքվում նախկին Թատերական, այժմ Ազատության հրապարակում, բոլորում օպերային թատրոնի շուրջ, բայց շատ քչերն էին ներսի դնում դրա շեմից ներս: Այդ պատճառով էլ հաճախ բեմի վրա ավելի շատ մարդ էր լինում, քան դահլիճում: Չխորանալով այս տխուր ու անողոքաբար երեւույթի պատճառների մեջ, որոնք շատ-շատ են՝ սկսած քաղաքականից մինչեւ կենցաղայինը, ասենք, որ ստեղծված այս աննախանձելի իրավիճակի մեջ մեղքի իր մեծ բաժինն ունի նաեւ թատրոնի տնօրինությունը:

Ակամայից զուգահեռ ես ուզում անցկացնել Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի հետ: Վերջինիս համերգներին տոմս ձեռք բերելը դյուրին գործ չէ: Հիշենք, որ այդ համերգների համար նշանակված ուրբաթ օրը ավանդական հանրահավաքների օր էր, եւ, չնայած դրան, շատ-շատերը, կիսաս թողնելով քաղաքական լուսավորության դասերը, շտապում էին դահլիճ՝ հաղորդակցվելու հնչյունների կախարդական աշխարհին: Գլխավոր «մեղավորը» այս հարցում նվագախմբի գեղարվեստական ղեկավար Լորիս Ճգնավորյանն է: Վերջինս, անկասկած, գիտե աշխատել հանդիսատեսի հետ, նրան գրավել իր կողմը, համատարած խանդավառության մթնոլորտ ստեղծել իր շուրջը: Հիմնականում նրա եռանդի ու աշխատասիրության շնորհիվ է, որ երաժշտական ուրբաթը շատերիս համար վերածվում է հոգու կիրակի: Արդյունքում առկա է այն իրողությունը, որ այս կոլեկտիվն ունի իր մշտական հանդիսատեսը, առանց որի անհնար է լիարժեք ստեղծագործել:

Ուրեմն ի՞նչ: Այն, որ կարելի է, ավելին՝ անհրաժեշտ է փնտրել եւ գտնել նոր միջոցներ ու ձեւեր օպերային հանդիսատեսին իր կողմը գրավելու, իսկ ավելի ճիշտ՝ օպերային եւ բալետային հանդիսատես պատրաստելու համար: Ոչ մի երկրում պատրաստի հանդիսատես չի ծնվում, այն դաստիարակվում է: Այս գործում մեծ դեր ունի խաղալու հենց թատրոնն ինքը: Հանդիսատեսին պետք է սիրել տալ ժանրը, ընդարաջ գնալ նրան: Ընդ որում, դա կարելի է անել եւ ուղղակի, եւ անուղղակի միջոցներով, ի շարս որոնց նաեւ բացօթյա ներկայացումներ բեմադրելով:

Մի՞թե չի կարելի, օրինակ, բատերաշրջանների բացումն ու փակումն անել բացօթյա պայմաններում, հենց օպերայի շեմին հարող Ազատության հրապարակում: Աշխարհի շատ թատրոններ կնախանձեին նման հրաշալի հնարավորությանը: Ես չգիտեմ, մեծն Թամանյանը, երբ նախագծում էր Ժողտունը, նաեւ դրա դիմացի բնական ամֆիթատրոն հիշեցնող հրապարակը, կանխագո՞ւշ էր, որ այդտեղ մի օր ազգահավաքի պիտի գան իր բազմահազար հայրենակիցները, եւ որ դա պիտի դառնա նրանց սիրելի հավաքավայրը: Ինչո՞ւ դժգոհել այդ հավաքներից՝ դրանք դիտելով իբրեւ թատերական կյանքին խանգարող երեւույթ: Հակառակը, պետք է օգտվել ստեղծված այդ վիճակից եւ հիշյալ հրապարակը երբեմն-երբեմն բեմադրավայր դարձնել օպերային ներկայացումների համար: Այդ դեպքում յուրաքանչյուր բատերաշրջանի բացում ու փակում երեւույթ կդառնար մայրաքաղաքի մշակութային կյանքում:

Ինչ խոսք, ոչ մի նորույթ չի փրկի դրությունը, եթե խաղացանկը մշտապես չթարմացվի համաշխարհային ու հայկական ազգային օպերաների նոր բեմադրություններով: Ինչո՞ւ թատրոնի պատմության սկզբնական շրջանում դիմորոշը եղել է ազգային խաղացանկը, իսկ այսօր՝ ոչ: Որքանո՞վ նորմալ կարելի է համարել այն երեւույթը, որ գրեթե չեն բեմադրվում մանկական ազգային օպերաներ: Ասվածը չի բացառում, իհարկե, երիտասարդության մի մասին գրավելու նկատառումներով ժամանակակից ռոք-օպերաների բեմադրությունը:

Կամ, ինչո՞ւ հայկական ազգային օպերային թատրոնում, ասենք, իտալական օպերաները հնչում են ռուսերենով: Մի՞թե տրամաբանական չէ այն, որ երբ բնագրով անհնար է հնչեցնել որեւէ ստեղծագործություն, արդա հարկ է, որ կատարվի մայրենիով, այլ ոչ թե որեւէ այլ միջնորդ լեզվով: Նպատակահարմար է նաեւ նույն թատրոնի փոքր դահլիճի բացումը կամերային բնույթի ներկայացումների եւ տարբեր համերգային կատարումների համար:

Պակաս կարեւոր նշանակություն չունի եւ գովազդի կազմակերպումը: Երբ Երեւան է գալիս որեւէ պոպ-խումբ կամ կասկածելի մակարդակ ունեցող ինչ-որ շոու-ծրագիր, հեռուստա եւ ռադիոներթը հեղեղվում է դրանց գովազդներով, քաղաքի տարբեր մասերում հայտնվում են դրանց հայտագրերը: Իսկ օպերային եւ բալետային ներկայացումների մասին ծանուցվում է դժգույն կերպով, որպես սովորական, շարքային երեւույթ: Դրանց հայտագրերին կարելի է հանդիպել, ինչպես նաեւ համապատասխան տոմս ձեռք բերել միմիայն օպերային եւ բալետի թատրոնի շրջակայքում, էլ ուրիշ ոչ մի տեղ:

Վերջապես, անչափ հիշ են հրավիրվում հանրահայտ երգիչ-երգչուհիներ: Ահավոր երկրաշարժից հետո ամեն տեղ կազմակերպվում էին աշխարհի օպերային աստղերի բարեգործական համերգներ, բացի Երեւանից: Ինչո՞ւ ժամանակին մենք չօգտվեցինք հանրահայտ իտալացի երգիչ Լուչիանո Պավարոտիի՝ հատուկ մեզ համար Մոսկվա ժամանելու հանգամանքից եւ նրան չհրավիրեցինք մեզ մոտ: Ինչո՞ւ...

Այո՛, ինչուները շատ են: Ժամանակները փոխվել են: Պարտադիր պիտի փոխվեն նաեւ գործունեության ձեւերը, այլապես տվյալ պարագայում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային թատրոնը հիշ-հիշ կկորցնի իր կշիռը մեր ժողովրդի հոգեւոր կյանքում: Մինչդեռ, իրականում պիտի լինի հակառակը եւ ամեն ինչ արվի ափեափ խփվող մեր ժողովրդի հոգու հավասարակշռությունը վերականգնելու համար:

Հուսանք, թե նոր փոփոխությունները, մասնավորապես նշանավոր նվագավար Օհան Դուրյանի վերադարձը հայրենի բեմ, կերջի դրությունը, կփրկի այն: Եւ այս անգամ արդեն, երբ մենք ասի, թե «օպերա եմ գնում», կհասկանանք՝ ոչ միայն օպերայի հրապարակ, այլ նաեւ օպերային ներկայացում դիտելու:

ԼԵՎՈՆ ԼՍԾԿՅԱՆ

Դարձյալ կոտրած տաշտակի առաջ

Նորմի զանգվածում գտնվող Հ. Դանիելյանի անվան թիվ 9 երաժշտական դպրոցին վերջապես վիճակվեց հրաժեշտ տալ խարխուլ շենքին, որտեղ անողոքմելի ճիգերով գոյատեւեց 23 տարի: Խորհրդային շրջգործկոմի որոշմամբ դպրոցին տրամադրվեց ՀԿԿ շրջկոմի նախկին մասնաշենքը: Ծրագիրը դպրոցի տնօրեն Գրիգոր Հախնազարյանի «Շրջանի մշակույթի եւ հոգեւոր զարգացման մանկապատանեկան կենտրոնի» ծրագիրը: Սակայն շուտով երեխաները եւ ծնողները հայտնվեցին շենքի աստիճաններին նստացույց հայտարարելով: Ի՞նչ պատահեց եւ ի՞նչ գործ ունեին զինվորականները դաշնամուրների կողքին: Պարզվեց, որ ոչ միայն գործ, այլեւ գործեր ունեին ՀՀ պաշտպանության կոմիտեի ներկայացուցիչները վերոհիշյալ շենքում, քանի որ անկախ շրջխորհրդի գործադիր կոմիտեի որոշումից, մեկ այլ որոշմամբ շենքը հատկացվել է իրենց: Ո՞ր որոշումն է զորեղ ու իրավականորեն ճիշտը: Հարցին պատասխանում է ՀՀ պաշտպանության կոմիտեի նախագահ պարոն Շիրխանյանը.

– Շրջխորհուրդը շենքը որեւէ մեկին հատկացնելու իրավունք չունի: Նման իրավունք ունի Նախարարների խորհուրդը, որը եւ հանձնարարել էր քաղխորհրդին անել առաջարկություն: Շրջխորհուրդը գերազանցել է իր իրավունքները, նրա որոշմանը մենք տեղյակ չէինք, եւ ծավալվեց մի անիմաստ վիճաբանություն, որը ես համարում եմ ժամանակի անտեղի կորուստ:

– Պրն. Շիրխանյան, չմոռանաք մի քանի կարեւոր հանգամանքներ. դպրոցն արդեն իր հնարավորությունների համեմատ մեծ ծախսեր է արել տեղափոխման համար, շուրջբոլորը բնակելի տներ են, եւ ինն ու ավելի զանգվածների համար սա միակ գեղարվեստի դպրոցն է, իսկ ձերը ռազմական հիմնարկ է, այն էլ մայրուղու վրա, 5-6 դպրոցների հարեւանությամբ:

– Մենք միայն դրական ազդեցություն կունենանք այդ ամենի վրա: Ոչինչ չի քանդվի, երեխաների համար էլ լավ կլինի, կրփվեն մեզ հետ, հանդիպումներ կունենանք:

– Հնարավոր չէ՞ ավելի փոխշահավետ տարբերակ գտնել:

– Կանխել այս գործընթացն այլեւս անհնար է: Մենք սովորել ենք պրոբլեմներ ստեղծել: Կարելի էր չտրել հարաբերությունները եւ միմյանց հասկանալ, երբ մենք չէինք պնդում այդ շենքը տեղափոխվելու համար: Շրջկոմը պատրաստակամություն էր հայտնում դատարկել մի ամբողջ հյուրանոց, միայն թե չմոտենանք շրջկոմի շենքին: Ինչու՞:

– Գտնու՞մ եք, որ այստեղ կա դիտավորություն:

– Սա արդեն կամակորություն է: Չգիտես, թե ինչու են սրում իրավիճակը:

– Ովքե՞ր:

– Շրջխորհուրդը եւ հատկապես Աշոտ Բլեյանը, որը առաջինը պետք է իմանար շրջխորհրդի որոշման մասին, քանի որ ինքը որոշման կայացման մասնակիցներից էր: Եթե մենք լինենք ավելի հարուստ, ավելի լավ պայմաններում, թերեւս կարելի էր իրագործել գեղագիտական դպրոցի ծրագիրը: Սակայն դա հնարավոր կլինի ավելի ուշ: Ցավալի է, որ մեզ հակադրեցին երեխաներին, եւ դա մեր մեղքը չէր: Մարդիկ պարզապես աշխատելու ձեւ չգիտեն:

Քանի դեռ մարդիկ աշխատելու ձեւ չգիտեն, կամ իմացած ձեւերն անհամատեղելի են, երաժշտական դպրոցը հայտնվեց նույն կոտրած տաշտակի առաջ: Նորմի 4-րդ զանգվածում գտնվող թիվ 9 երաժշտական դպրոցի հասցեն նույնն է, այնտեղ սկսվել են ավանդական պարապմունքները:

ՎԱՆՈՒՀԻ ԲՂՈՅՅԱՆ

Երեւանի Քիմիական ռեակտիվների գործարան

Հայտարարություն

Ս. թ. սեպտեմբերի 24-ից 27-ը Երեւանում տեղի է ունենալու օրգանական քիմիական ռեակցիաների միջազգային կատալիզին նվիրված միջազգային սիմպոզիում:

Սիմպոզիումի կազմակերպիչներն են՝ Հայաստանի գիտական եւ ինժեներական ընկերությունների միությունը, Դ.Ի. Մենդելեեւի անվան համամիութենական քիմիական ընկերության Հայաստանի վարչությունը եւ «Ռադիկալ» գիտատեխնիկական կենտրոնը:

Սիմպոզիումի հովանավորներն են՝ Երեւանի Քիմիական ռեակտիվների գործարանը, Երեւանի Մյասնիկյանի անվան թիւ 1 արտադրամեքենաշինական տրիկոտաժային միավորումը եւ Հայաստանի գիտական եւ ինժեներական ընկերությունների միությունը:

Գիտական նիստերը տեղի են ունենալու Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Հասցեն՝ Իսահակյանի փող. 1: Նիստերի սկիզբը՝ ժամը 10-ին:

Նիստերին մասնակցել ցանկացողները կարող են սեպտեմբերի 16-ից 20-ը ժամը 10-ից 13-ը եւ 14-ից 17-ը պատշաճորեն գրանցվել Երեւանի տեխնիկայի տանը, մուծելով համապատասխան կազմակերպչական վճար:

Հասցեն՝ Մոսկովյան փող. 11, սենյակ 11, 12:

Գրանցման պայմանների հետ կարելի է ծանոթանալ նույն ժամերին

58-71-21 հեռախոսով:

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

Մրցույթ Ռամկավար ազատական կուսակցության 70-ամյակի առթիվ

1991 թ. հոկտեմբերի 1-ին Ռամկավար ազատական կուսակցության հիմնադրման 70-ամյակն է: Այդ առթիվ մայր հայրենիքում եւ սփյուռքում նախատեսվում են բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում՝ կուսակցության պատմությանը եւ նախապատմությանը (1885-ից սկսած) նվիրված լավագույն մենագրության, գիտական հոդվածի եւ հրապարակման մրցույթ:

Գիտական հոդվածի եւ հրապարակման համար մասնակիցները մինչեւ դեկտեմբերի 31-ը իրենց աշխատությունները մրցույթային հանձնաժողովին ներկայացնեն հետեւյալ հասցեով. Երեւան, Հանրապետության փողոց 47, «Ազգ» թերթի խմբագրություն, ՌԱԿ-ի մրցույթային հանձնաժողով:

Մրցանակներ

1. մեկ առաջին մրցանակ՝ 2000 ռուբլի

2. երկու երկրորդ մրցանակ՝ 1000-ական ռուբլի

3. երեք երրորդ մրցանակ՝ 500-ական ռուբլի

4. չորս խրախուսական մրցանակ՝ 200-ական ռուբլի:

Մենագրությունների հեղինակներն իրենց աշխատությունները պետք է հանձնաժողովին ներկայացնեն մինչեւ 1992 թվականի մայիսի 31-ը նույն հասցեով:

Մրցույթին ներկայացվող աշխատանքների մոտավոր թեմատիկա.

1. Արմենական կուսակցության ձեւավորումը, ծրագիրը, գործունեությունը եւ պատմական դերը:
2. Արմենականները 1896-ի հերոսական ինքնապաշտպանության ոգեկոչողներ:
3. Մկրտիչ Ավետիսյան եւ այլ նշանավոր արմենականներ:
4. Վերակազմյալ Հնչակյան կուսակցության ծնունդն ու գործունեությունը, ծրագիր-կանոնագիր:
5. Գաղափարական միություն, Միացյալ հայ հեղափոխական կազմակերպություն, նրանց ծրագրերը:
6. Հայ Սահմանադիր ռամկավար կուսակցության ձեւավորումը, որպես առաջին բացահայտ կուսակցություն Թուրքիայում 1908-ի Սահմանադրության հռչակումից հետո:
7. ՀՍՌԿ-ի ծրագիրը, կանոնագիրը, դրանց բնութագրումը:
8. ՀՍՌԿ-ի մամլո օրգանները եւ դրանց դերը:
9. ՀՍՌԿ-ի համագումարները, կարեւոր որոշումներ, փաստաթղթեր:
10. Նշանավոր ռամկավարներ՝ Արմ. Եկարյան, Մ. Տամատյան եւ ուրիշներ:
11. Ազատական կուսակցությունը, նրա էությունը: Ազատական գաղափարախոսությունը:
12. Ռամկավարությունը որպես նոր գաղափարախոսություն, նրա արմատները եւ դրսեւորումները հայ իրականության մեջ:
13. Ժողովրդական կուսակցություն, նրա բնութագիրը:
14. Կիլիկիո անկախությունը եւ ՀՍՌԿ-ը:
15. Վանի 1915-ի հերոսամարտը եւ ռամկավարները: Արմենակ Եկարյանը ընդհանուր զինվորական մարմնի ղեկավար:
16. ՌԱԿ-ի կազմավորումը, նրան գոյացնող հատվածները:
17. ՌԱԿ-ի ծրագիրը, կանոնագիրը եւ կրած փոփոխությունները:
18. ՌԱԿ-ը մինչեւ 2-րդ համաշխարհային պատերազմը:
19. ՌԱԿ-ը եռապատերազմյան տարիներին եւ Խորհրդային Հայաստանը:
20. ՌԱԿ-ի կարեւոր համագումարները եւ դրանց փաստաթղթերը:
21. ՌԱԿ-ը հայկական հարցի լուծման ուղիների մասին:
22. ՌԱԿ-ը անկախության, ազգաբնակչության, ազատության խնդիրների մասին:
23. Ազատ տնտեսական գործունեությունը եւ ՌԱԿ-ի ծրագիրը:
24. Ռամկավար ազատական գաղափարախոսության արմատները եւ նրա անհրաժեշտությունը արդի Հայաստանի համար:
25. Ժողովրդավարություն:
26. Ազատականություն (լիբերալիզմ):

digitised by A.R.A.R.@

ՍՈՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՏՈՒԼ

Թեկնածուն, որ արդէն նախագահ է

Հայաստանի աւունը լեցուն է քաղաքական կեանքի հանգրուաններով, որոնք հիմնաղէս ոլորտի փոխեն երկրին քաղաքական հոլովոյթը. եթէ արտաքին դաշտահարներ չխանգարեն դէպքերու ընթացքը, Հայաստան վերջապէս ոլորտի ճշդէ միջազգային քաղաքական բեմին վրայ իր հանգամանքը սեպտեմբեր 21-ի անկախութեան հանրաքուէով. երկրորդ կարեւոր հանգրուանը ալ ոլորտի նշէ հոկտեմբեր 16-ը, որ ինչպէս ծանօթ է, նախագահական ընտրութեան համար որոշուած թուականն է: Այսօր, այս թուականէն երկու ամսուան հեռաւորութենէ մը, արդէն սկսած են յայտնուիլ երկրին իշխանութեան բարձրագոյն աթոռը գրաւելու թեկնածուները. ճիշդ է որ օրինական պարտաւորութիւններ պէտք է լրացնեն անոնք, նկատուելու համար գործնապէս նկատառելի թեկնածուներ, սակայն նկատի առած այդ պարտաւորութիւններուն ոչ շատ խիստ հանգամանքը, սխալ չըլլար զիրենք տեսնել արդէն այդ դիրքին վրայ: Տեսնել, ապա կարելի չափով փորձել մօտէն ճանչնալ այն տրամադրութիւնն ու մտաւոր կառոյցը ի յառաջագունէ ընդունելով, որ կասկած չի վերցներ անոնց գոյութիւնը այս «յաւակնութեան» տէր անձերու մօտ, որ ինքզինքը կը զետեղէ դէպի նախագահութիւն տանող ճամբուն վրայ:

Ճիշդ է որ թեկնածուներու յայտարարուած ցանկը առայժմ ծանօթ անուններէ կը բաղկանայ՝ Պ. Հայրիկեան, Ս. Սարգսեան, Զ. Բալայեան, Վ. Մանուկեան, Ռ. Ղազարեան..., սակայն աւելորդ պիտի չըլլայ նորագոյն տուեալներով նկատի ունենալ զանոնք, կարելի չափով հիմնուելով իրենց իսկ արտայայտութիւններուն վրայ: Այս իմաստով լաւ առաջին առիթ մը կ'ընծայէ «Ազգ» եռօրեայինն օգոստոսի 14-ի թիւին մէջ Պարոյր Հայրիկեանի հետ կատարուած հարցազրոյցը, որ խորագրուած է *«Ես արդէն յաղթել եմ»*:

Համեստութիւնը, կ'երեւի, հաւուի առնելիք կարեւոր յատկանիշ մը կը նկատի Հայաստանի նախագահութեան թեկնածուներու համար: Անցեալները, Հանրապետական կուսակցութեան պարագլուխը՝ Լեոն Նավասարդեանն էր, որ իրեն հետ կատարուած հարցազրոյցի մը ընթացքին կը նշէր, թէ կը մտածէ նախագահութեան թեկնածու ներկայանալ, սակայն կը վախենայ անհամեստ երեւալէ: Պարոյր Հայրիկեան եւս նախ կը պտտի նոյն լարերուն վրայ. ան կ'ըսէ. *«Ես դեռ վերջնական պատասխան չտուած եմ, դա կաղուած է այլեւայլ հանգամանքների հետ: Ես կը գերադասէի տեսնել մէկին, ում օգտին ինքս կը հրաժարէի»*: Տեսած կամ լսա՞ծ էք աւելի ճարտիկ տարազ, հասկացնելու համար, թէ *«ես եմ ամէնէն արժանաւորը եւ լաւագոյն թեկնածուն, յա՛ գիտցէք»*: Վերադառնալով Պարոյր Հայրիկեանի արտայայտութեան, ան վերջապէս հաւանաբար երկրին բարձրագոյն շահին զոհելով իր համեստութիւնը, կը սիրուի ըսել... որոշէսզի մարդիկ իմանան, թէ *«Ագա՛, ժողովրդավարական ընտրութիւններում... կարելի է ասել, որ ես արդէն յաղթել եմ»*: Չէ՛. կատակ չէ, ու մինչ այդ անյայտ մնացած այս յաղթանակին տէր կը շարունակէ, չվախնալով մեծիծաղներ նշմարելէ ունկնդիրներու կամ ընթերցողներու դէմքին վրայ. *«Ես Հայաստանի նախագահն եմ»*: Յետոյ, պէտք զգալով բացատրել այսքան զգայացունց յայտարարութեան մը *«արդարացուցիչ դէպք յանցանաց»*ը, կը մանրամասնէ ի պէտս անգիտաց. *«Նախագահ նշանակում է մարդ, որը մտածում է հաղթականութիւն եւ իրականացնում է այն: ...Որպէս հաղթական կազմակերպութեան ղեկավար, ես ամենայն պատասխանատուութեամբ կարող եմ ասել, որ Հայաստանը գնում է իմ առաջադրած ճանապարհով»*:

Պարոյր Հայրիկեան ճիշդ է որ անկախութեան վաղայայտ մէկ ջատագովն ու մարտիկն է Հայաստանի իրականութեան, շատերէ առաջ նուիրուած է այդ տեսլականին եւ այդ նուիրումը վճարած տարիներու արգելափակումով: Այսքանը սակայն բաւարար կարելի՞ է նկատել մէկու մը իշխանութեան գերագոյն աստիճանին ձգտելու երազի համար: Պարոյր Հայրիկեանի իսկ արտայայտութեամբ՝ ո՛չ, քանի որ նախագահը այն մարդն է, որ քաղաքականութիւն կը մշակէ ու կ'իրականացնէ զայն:

Վերոյիշեալ զրոյցին հեղինակը՝ Յակոբ Ասատրեան չէ հարցուցած Պարոյր Հայրիկեանի «մշակած» ու մանաւանդ «իրականացուցած» քաղաքականութեան մասին: Հոս, որոշէսզի ներկայացումը կարելի չափով լման ըլլայ, բոլոր արտօնի ժամանակին ու վայրին մէջ շեղում մը, մէջբերելու համար Հայրիկեանի եթէ ոչ իրականացուցած, գոնէ իր խօսքերով իսկ «մշակած» քաղաքականութենէն էջ մը:

1988 օգոստոսին արտասուելով Խորհրդային Միութենէն, Պարոյր Հայրիկեան հասաւ Քարիզ. իր աղրած տառապանքին հանդէպ հեռուէն ստեղծուած ակնածանքը կը մղէր ընդառաջելու իր կողմէ ներկայացուած մամուլի ասուլիսին մասնակցելու հրաւէրին: Հոն, անկախութեան նիւթին շուրջ պատկանող զանազան հարցումներու կարգին, մէկը ուզեց գիտնալ, թէ տնտեսական ինչ ծրագիր մշակած էր Հայրիկեանի խումբը անկախ Հայաստանի համար: Պատասխանը անկախութեան երազին վրայ լեցուած առաջին դոյլ պաղ ջուրը եղաւ, երբ այսօր արդէն ինքզինքը յաղթական նկատող թեկնածուն ըսաւ ամենայն հանգրստութեամբ. *«կոնեակ կը ծախենք ու կ'ապրենք»*...: Ստեղծուած յուսախաբ զարմանքը դարմանելու համար պէտք է ըլլայ, ան հարկաւոր նկատեց ներկայացնել նաեւ իր իսկ խօսքերով՝ *«Սփիւռքի համար մշակուած ծրագիրը»*, քանի որ ունկնդիրները բոլորն ալ Սփիւռքի հայ մամուլին կամ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներն էին:

Սփիւռքի հայութիւնը երկու միլիոն ենթադրելով, որոշուած էր պահանջել իւրաքանչիւր սփիւռքահայէ, որ տարեկան դիմումնագիր մը, հոն պիտի նշուէր իր կամ ծնողին ծննդավայրը (Արեւմտահայաստանի սա կամ նա գաւառը, կամ գիւղը), աւելցնելով որ ինք շառաւիղն է իր հողէն բռնութեամբ արտաքսուած ընտանիքի մը ու պատրաստ է վերադառնալու այդ բնակավայրը, անմիջապէս որ պայմանները ներէն: Այսպէս պատրաստուած երկու միլիոն թերթիկները պիտի կազմուէին, ձեւացնելով հազարակաս էջնոց երկու հազար հատոր, ապա բոլորը պիտի դրկուէին Եւրոպայի հասարակապետութեան ղեկավարութեան: Տեսնելով, որ զարմանքը իր խօսակիցներու դէմքերէն հետզհետէ վաներ էր հիշ առաջուան յուսախաբութիւնը ու առանձին հոն բազմեր, Հայրիկեան փութացուց վերջաբանը. *«երբոր Թուրքիա վերանորոգէ անդամակցութեան իր դիմումը, Հասարակապետութեան ղեկավարութիւնը ցոյց տալով հայկական հատորներու բանակը, որպէս նախապայման պիտի պահանջէ որ կարգադրէ հայկական հարցը»*: Այս հաշիւները կը ներկայացուէին ժամանակի մը, երբ ներքուներուն միտքին մէջ բարձր էր Ղարաբաղի կցումին համար ստորագրութեան աւելաը, որ 400 հազար նկատուած Թրանսպահայ գաղութին մէջ փակուած էր 17 հազարի շուրջ թիւով մը: Կ'երեւի անհանգստացած զարմանքին շեշտումն. Պարոյր Հայրիկեան պէտք զգաց արդարացնելու. *«Ըսի՝ որ գրուի թէ պատրաստ էք վերադառնալու, սակայն պայման չէ անմիջապէս վերադառնալ. միայն այդպէս պէտք է գրել»*...:

Այսքանն եւս, տակաւին եթէ բան մը հարկ է լրացնելու համար «արդէն յաղթական» թեկնածու Հայրիկեանի պատկերը, կարելի է վերջին երկու մէջբերումներով փակել այս էջը. *«Նախկինում ստեղծուեց «Ղարաբաղ» կոմիտէ, յետոյ ԱԻՄ-ի գաղափարները վերցնելով փորձեցին ստեղծել ՀՀԵ»*:

Եւ *«երբ մեր ազգն ունէր այսպիսի հարստութիւն՝ ԱԻՄ-ը, պէտք է այդ հարստութիւնը, այդ աղամանդը վերցնել ու յոգել, եւ ոչ թէ ամէն կերպ հրել աղբանոց»*:

Չէ՞ք կարծեր որ նախագահական ընտրութեամբ գունաւոր անկիւնադարձ մը ալ պիտի նշէ մեր ժամանակակից պատմութիւնը:

ՍՈՓԻ ՔՈՉՈՅԵԱՆ

Նա հաստատեց ապրելու իրաւունքը

Լրացաւ արցախցի վաղամեռիկ քանդակագործ Արմեն Հակոբյանի ծննդյան 50 տարին: Այդ առիթով Ստեփանակերտում վերջերս բացվեց նրա ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը, ուր ներկայացվել էին փոքր չափի քանդակներ, ծավալային քանդակագործական աշխատանքների լուսանկարներ եւ մեծ թվով կիսաս գործեր:

Այցելուները տխուր էին. գեռ բարձր էր քանդակագործի մահվան կսկիծը, եւ ցուցասրահում իշխում էր կորստի ու ափսոսանքի մթնոլորտ:

- Արմենը ձգտում էր օգտագործել Արցախի ժողովրդական արվեստի ակունքները:

«Երկրաշարժը ողբացող այրին»

«Հնձվորները»

Միտումնավոր կերպով պարզունակությունը դարձնելով արտահայտչաձեւ՝ այն հասցրեց պրոֆեսիոնալ մակարդակի,- խորհում է նկարիչ Սամվել Գաբրիելյանը: - Որպես մարդ անաչառ էր, ազնիվ: Մենք սկզբում կապ չունեինք Հայաստանի արվեստագետների հետ: Վերջին տարիներին մտանք Հայաստանի արվեստի ընդհանուր կաթսան:

- Արմենը վստահություն, լավ զգացողություն էր ներշնչում: Ես պարտքի եւ մեղքի զգացողություն ունեմ. ինձ թվում է իզուր տեղը զոհ տվեցինք,- ափսոսանքով ասում է Հադրութի հայրենագիտական թանգարանի երիտասարդ տնօրեն Արքուր Մկրտչյանը:

Նկարիչ Առնոլդ Մելիքսեթյանը, որը Արմենի մտերիմներից էր, արվեստագետին ներկայացնում է այսպես.

- Արմենի այս ցուցահանդեսը մտնելով, անվստահ արցախցին ապրելու համար վրստահություն է ձեռք բերում:

Արմենը երկար ժամանակ բացակա էր եղել Արցախից եւ ուզում էր ձեւավորվել: Շատ հիշ գործեր է ավարտել, մեծ մասը կիսաս են: Իջեւանի միջազգային գիտաժողովի օրերին՝ 1988 թվականին Արմենը ստեղծեց *«Արցախ»* քանդակը, որը կաղկղված հրաբեսակ է: Դրա մտահղացումը ծնվեց մոր կերպարից եւ զարգանալով արցախյան շարժման հետ, դառնալով ավելի լայն ու ընդգրկուն խորհրդաղաղաստեր՝ դարձավ նաեւ Արցախի, հայրենիքի եւ ազատության խորհրդանիշ: Դրանից հետո քանդակեց Նշված գործերը, ինչպես նաեւ *«Հնձվորները»*, *«Պրլը Պուղին եւ Մելիք Շահնազարը»* նոր որակ եւ սկիզբ դարձան նրա համար:

- Ես ամեն վայրկյան զգում եմ Արմենի ներկայությունը,- արցունքների միջից շշնջում է Արմենի կինը՝ Դոնարան:

Արմենի 50-ամյակն է, նրա ցուցահանդեսի բացումը, սակայն կցկտուր են բոլորիս խոսքերը: Բոլորս հիշում ենք անցյալ տարվա դժնի օրը՝ 1990-ի հունվարի 2-ը, երբ Ստեփանակերտի միջով անցնող զրահամեքենաների եւ ավտոմատավոր զորքի կրակոցներից ընկավ քանդակագործը:

Խնկո-Ապոր գրադարանը ստանում է սփյուռքահայ թերթեր

Վերջին ամիսներին հաճելի անակնկալ ստացան Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի ընթերցողները:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախաձեռնությամբ նամակներ առաքվեցին տարբեր երկրներ՝ հայատառ մամուլ ստանալու ակնկալիքով: Շուտով ստացվեցին *«Ջահակիր»*, *«Մարմարա»*, *«Արեւ»*, *«Հառաջ»*, *«Նոր սերունդ»*, *«Հորիզոն»*, *«Մասիս»* թերթերի բարձ համարները:

Նման պարբերականների ստանալը հրճւարավորություն է տալիս մեր ընթերցողներին, ինչպես նաեւ գրադարանի սպասարկող կազմին անմիջականորեն ծանոթանալու սփյուռքահայ կյանքին: Հուսով ենք, որ շուտով կստացվեն սպասվելիք մյուս թերթերը եւս, եւ կշարունակվի ազգանվեր այս գործը: Գրադարանի աշխատողների եւ ընթերցողների անունից մեր երախտագիտությունն ենք հղում սփյուռքի հայ մամուլի մշակներին, որոնք արձագանքեցին մեր խնդրանքին:

Սրտացավ կսմիթներ

Բաց երկտող «Լրաբերին»

Ինչո՞ւ չեք հայ ներկայացնում «Գինեսի» գրքում գրանցվելու համար. դուք առաջին տեղը կգրավեք լուրերը ամենաուշը հայտնելու մրցույթում: Կամ էլ եթեր դուրս եկեք առավոտվա 4-5-ին. ձեզ ոչ կտեսնեն, ոչ էլ կխոսեն ձեզ վրա...



Հիանալի է

Ինչպես հայտնում են «Լրաբեր»ի թղթակիցները, հանրապետության կովերը, անկախության շունչն զգալով, սկսել են ավելի շատ կաթ տալ: Նրանք նաեւ հեռուստալրագրողների միջոցով հայտնել են, որ եթե հանրաքվեի ժամանակ ժողովուրդը 100 տոկոսով «այո» ասի, ապա պատրաստ են միանգամից կարագ տալ:

Իզուր ջանքեր

Անկախությունը, որի համար այդքան երկար պայքարում էին հայ անկախականները, առանց նրանց էլ իրողություն դարձավ:

Խաղաղ բանգավթում

Կարճ ժամանակում սփյուռքի մեր կուսակցությունները կարողացան նվաճել **Ազգն** ու **Երկիրը**:

ԴԱՎԹԻ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Բաց նամակ «Ազգ» թերթի խմբագրին եւ լրագրող Ս. Հակոբյանին

«Ազգ» թերթի սեպտեմբերի 7-ի համարում զետեղել էինք ՀԱՄԽ-ի լրատվական կենտրոնի վարիչի տեղակալ Ս. Հակոբյանի «Եկեք չխաբվենք» վերնագրությամբ հոդվածը, ուր նա իր նկատառումներն էր արտահայտում «Տրուդ» թերթում տպագրված երկու հրապարակումների («Ինչպե՞ս ապրել հետո» եւ «Ես չափազանց շատ եմ սիրում հայրենիս՝ այն վտանգելու համար») կապակցությամբ: Խմբագրությունը ծանոթացել էր «Տրուդ»-ի զույգ հրապարակումներին եւ հատուկ մի քանի տող գրել որպես վերջաբան, ցույց տալու, թե ինքն այդ հարցում ունի սեփական կարծիքը:

Ս. Հակոբյանի հոդվածը մենք տպագրել էինք, ելնելով թերթի սկզբունքից. տեղ տալ ցանկացած տեսակետի, եթե այն չի խախտում լրագրական էթիկայի կանոնները: Նույն սկզբունքով ստորեւ տպագրում ենք Սոս Սարգսյանի պատասխան նամակը՝ ուղղված թերթին եւ վերոհիշյալ հոդվածագրին:

Ավելացնենք, որ հարգարժան Սոս Սարգսյանի ոչ կուսակցական պատկանելությունը, ոչ էլ նախագահական թեկնածությունը պատճառ չեն հանդիսացել նախորդ հրապարակմանը, ինչպես մեկնաբանում է ինքը: Եվ ոչ էլ խմբագրությունը հետամտել է, թե Սոս Սարգսյանը երբ եւ որտեղ պիտի հարցազրույց տպագրի, որպեսզի շատերդ արձագանքել: Հավատալը թողնում ենք իրեն: *ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

Հարգելի խմբագիր, նախ թույլ տվեք մի քանի հարց ուղղեմ Ձեզ. կարդացե՞լ եք, արդյոք, Դուք իմ այն հարցազրույցը, որի շուրջ դատողություններ է անում Ձեր հոդվածագիրը:

Հետո՝ Ձեր հոդվածագիրը ռուսերեն կարդալ գիտե՞: Թե՞ ռուսերենի իմացությունը նրա համար շատ է վիրավորական:

եւ վերջապես՝ նախքան «Տրուդում» տպագրվելը իմ հարցազրույցը տպվել է «Գոլոս Արմենիի» լրագրի հուլիսի 3-ի եւ 4-ի համարներում: Ինչու՞ դրան անդրադարձաք միայն սեպտեմբերի յոթին: Այսինքն՝ երկու ամիս անց:

Ենթադրում եմ լոկ այն պատճառով, որ Ձեզ հայտնի դարձավ, որ ես Հ.Յ.Դ. կուսակցության անդամ եմ եւ նախագահության թեկնածու: Գրեթե համոզված եմ. անձնապես իմ նկատմամբ հարգանք ունեք, բայց այս դեպքում հավանաբար անձը չէր կարեւոր Ձեզ համար, այլ ավանդական ծեր «բշնամին»:

Հարգելի պրն Ավետիսյան, ցավում եմ եւ շատ: Միշտ էլ բնական եմ համարել մրցակցությունը Ռ.Ա.Կ.-ի եւ Հ.Յ.Դ.-ի միջեւ, բայց միշտ էլ խորը վշտով եմ ընդունել այս երկու հնագույն, ազգային կուսակցությունների առճակատումը: եւ ողջ կարողությամբս պայքարելու եմ, որ ժամանակին ՊԱԿ-ի ձեռքերով ստեղծված արհեստական, սարքովի այս հակամարտությունը վերանա: Սփյուռքում բորբոքված բշնամությունը չպետք է արմատներ գցի Հայրենիքում: Ինքներդ էլ տեսնում եք. Հայրենիքը կարոտ է համերաշխության:

Այժմ խոսքս ուղղեմ պրն Ս. Հակոբյանին, որից, բնական է, իրավունք չունեմ պահանջելու, որ համաձայնի իմ ասածներին, էլ չեմ խոսում այն հորինվածքների մասին, որ նա փորձել է փաթաթել իմ վզին:

Դուք, պրն Հակոբյան, վստահաբար գրում եք, որ ես երեք տարի է կտրվել եմ հայ մշակույթից, իմ գործից: Անտեղյակություն:

Պարտք եմ համարում անձամբ Ձեզ զեկուցել, որ այս երեք տարիների ընթացքում ես շարունակել եմ նախկին ծանրաբեռնվածությամբ (սուբյեկտիվ պատճառներով միայն՝ ոչ թատրոնում) **«լողալ հայ մշակույթի օվկիանոսում»**: Նկարահանվել եմ **հինգ սերիանոց «Որտեղ էիր, մարդ Աստծո»** վերնագիրը կրող Ֆիլմում:

Ռադիոյի համար բազում ձայնագրություններ եմ արել օրվա դեպքերին վերաբերող: Նորից եմ կարդացել գրեթե մեկ ժամանոց իմ բեմարկած Նարեկացու **«Մայյան ողբերգության»**-ը: Կրկին ձայնագրել եմ **«Անուշ»** պոեմը, Թումանյանի խոսքերը, Հ. Սահյանի բանաստեղծությունները:

«ՀայՖիլմ»-ի եւ հեռուստատեսության հանձնարարությամբ ձայնագրել եմ տասնյակ վավերագրական Ֆիլմեր ու հաղորդումներ:

Այս երեք տարում ավարտել եմ **«Մատենադարան»** Ֆիլմաշարի **չորս** մասերը: եւ «Մատենադարան» Ֆիլմով է, որ (կներեք անհամեստությանս համար) ես աշխարհին եմ ներկայացրել հայոց օվկիանոս մշակույթը, հայերի պատմությունը, նրա կորուստները, նրա հաղթանակները: Ֆիլմը թարգմանվել է անգլերեն, Ֆրանսերեն, ռուսերեն եւ ցուցադրվել շատ երկրներում, այդ թվում եւ Մոսկվայի կենտրոնական հեռատեսիլի առաջին ծրագրով: Ցուցադրումը խանգարվել եւ խոչընդոտվել է Ադրբեջանում, ամեն ինչ արվել է, որ չդիտվի Արցախում: Ավելորդ եմ համարում ասել, որ «Մատենադարան» կինոնկարը ցնցող տպավորություն է թողնում օտարազգի դիտողների, այդ թվում եւ ռուսների վրա:

Շարունակեմ զեկույցս, պրն Հակոբյան. այս երեք տարիներին գրել եմ տասնյակ պատմվածքներ, նույնչափ հոդվածներ եւ տպագրության եմ հանձնել գիրքս: Ձեզ նվիրելու եմ անպատճառ:

Կարող եք գումարել՝ շաբաթը մեկ Արցախում իմ գտնվելը եւ համարյա երեսունհինգ հազար Սումգայիթի ու Բաքվի փախստականներին, որ Արցախ մտնելուց առաջ հերթով մտել են իմ փոքրիկ բնակարանը ոչ միայն օգնություն, այլեւ կարեկցանք ու ջերմություն ակնկալելով:

Ի դեպ, պրն Հակոբյան, երբ չկար ուրիշ հնարավորություն, ես խաղախանություն էի անում իմ արվեստով: Հիշեցնեմ միայն **«Ձորի Միրոն»**: Յոթանասուն տարիների ընթացքում առաջին անգամ հայ կինոյում ես ներկայացրի էկրանում հայ մարդուն հրացանը ձեռին եւ կռակող, եւ լավ նշանառու: Քաղաքական ու գաղափարական եւ առանձնապես ազգային զարթոնքի համար (Սփյուռքում եւ Հայրենիքում), եւ մանավանդ երիտասարդության կյանքում թե ինչ դեր է խաղացել իմ Միրոն, կարծում եմ ձեզ հայտնի է:

Հարգելի պրն, երբ ես խոսում եմ ռուսական լեզվի ու մշակույթի մասին (դրանից առաջ գրեթե մի սյունակ ռուս ընթերցողին տեղեկացնում եմ, որ հայ մարդը ոչ անցյալում եւ ոչ ներկայումս չի եղել եւ չի լինի սրուկ, պատմում եմ, թե կյանքի բոլոր ասպարեզներում ծնել ենք մեծ մարդկանց՝ զորավարներից ու գիտնականներից սկսած մինչեւ արվեստագետներ ու վաճառականներ), մի՞թե պարզ չէ, թե ինչի եմ կոչում իմ ժողովրդին: Նախ, ռուսական լեզվի հետ մեկտեղ կարեւորում եմ անգլերենի, պարսկերենի, արաբերենի ու... թուրքերենի իմացությունը (հուսով եմ, թուրքերենը Ձեզ չի խոցում):

Հիմա մշակույթի մասին: «Բանաձեւը» փոխեմ, բայց սա իմ համոզումն է: Ռուս ժողովուրդ հանած գերմանական կամ Ֆրանսիական մշակույթ նույնպես հավասար է **«վայրի ցեղի»**:

Դուք, պրն Հակոբյան, լրագրող եք, մասվորական, մի՞թե չգիտեք, որ մշակույթները չեն կարող զարգացում ապրել ինքնապարփակ շրջանակներում, որ շփումներն են փոխհարստացնում, որ վերջապես իմացությունն է ամեն ինչի սկիզբը:

Չգիտեմ դուք ինչպես, բայց ես ամենից շատ զգուշանում եմ անհատ մարդու եւ առավել՝ ժողովրդի տգիտությունից: Ինձ համար կյանքը կիմաստազրկվի, եթե ես իմ ժողովրդին տեսնեմ **«անկիրթ ցեղերի»** բափառական շարքում:

Անկեղծ ասած, կասկած չունեմ, որ ամեն ինչ գիտեք եւ ինձանից լավ եք հասկանում, սակայն Դուք էլ չկասկածեք, որ ես հասկանում եմ, թե ինչ նպատակով եք գրել Ձեր հոդվածը:

Մեր ժողովրդի ապագան ես տեսնում եմ բարձր կրթվածության մեջ, համենայն դեպս՝ երազում եմ:

Մենք պետք է զարգացնենք ռադիոէլեկտրոնիկայի, հաշվային տեխնիկայի, ռոբոտատեխնիկայի արտադրությունները:

Պարզից էլ պարզ է ուրեմն, որ այս ուղղությամբ զարգանալու համար մեզ պետք են լեզուներ:

Դուք, պրն Հակոբյան, հայտարարում եք, որ ես խաղախանք չեմ: Ո՞վ է վիճում: Բայց ասացեք խնդրեմ, կլինե՞ի այդպիսին, եթե ռուսական թերթում հայհոյեի ռուսներին կամ ցույց տայի, որ մենք իրենց ատում ենք, ատում ենք իրենց ամեն ինչը:

Քաղաքագետ եմ, թե ոչ, դա չէ կարեւորը. հայտնում եմ Ձեզ, որ ես, այնուամենայնիվ, իմ ժողովրդի համար բարեկամներ փնտրելու **«խաղաղասիրություն ունեմ»**: Եղած թշնամիները բավարար են:

Ինչ վերաբերում է Միութենական պայմանագրին, ես եւ իմ կուսակցությունը ոչ մի անգամ եւ ոչ մի տեղ չենք պնդել, որ այն պետք է ստորագրվի: Ես եւ իմ կուսակցությունը պարզապես համոզված ենք, որ Ռուսաստանի հետ առճակատման չպետք է գնալ:

Ավարտելուց առաջ, հարգելիս, խոստովանում եմ, որ իրոք հիացած եմ Ձեր երեւակայությամբ: Այդ ե՞րբ եւ որտե՞ղ եք կարդացել կամ լսել, թե ես ասել եմ՝ պետք է մասնակցել Միութենական հանրաքվեին: Միանգամայն հակառակը՝ դեմ եմ եղել: Կամ ցույց տվեք ինձ մի տող, որտեղ ես դեմ եմ արտահայտվել անկախությանը: Պարզաբանեմ՝ այս խնդիրն ինձ համար ունեցել է երեք հարց՝ ե՞րբ, ինչպե՞ս եւ ի՞նչ գնով: Անշուշտ, Ձեզ նման հարցեր չեն տանջում:

Վերջապես, բոլորովին անհեթեթ է (մեղմ ասած) Ձեր այն մտահղացումը, թե ես դեմ եմ հայոց դպրոցներին: Ինձ ճանաչող ու կարդացող ո՞ր լուրջ մարդը կհավատա: Հոգու խորքում համոզված եմ, որ դուք էլ չեք հավատում:

Եկեք միասին չհավատանք...

Սոս ՍԱՐԳՍՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿ

Սփյուռքահայ մամուլը, ինչպես միշտ, ուշի-ուշով հետեւում է հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին: Ստորեւ ներկայացնում ենք «Պայքար» շաբաթաթերթի օգոստոսի 17-ի համարում տպագրված Գրիգոր ՔՅՈՍԵՅԱՆԻ հոդվածը, ուր նա խորհում է նախագահական ընտրությունների հետեւանքով ծագած հակամարտությունների շուրջ:

Ըստ տարբեր ժամանակներում, տասնմեկ կամ տասներեք էին այդ երիտասարդ հրացանակիրները, որոնք որպես *«Ղարաբաղի Կոմիտե»*-ի ղեկավար անդամներ՝ կողք-կողքի կը մաքառէին, յոյս եւ ոգեւորութիւն կը ներշնչէին Երեւանի Ազատութեան հրապարակը հաւաքուած հարիւր հազարաւոր ցուցարարներուն, օրինակ կը դառնային անձնուրացութեան եւ նուիրումի: Անոնք իրենց դէմ կը զգնէին հասարակաց մէկ բշնամի, որուն քաջարար կուրծք կուային: Անոնք միասին էին նաեւ բանտին մէջ, առանց երբեք նոյնիսկ կռահելու, թէ Մոսկուայի իրենց արգելանոցէն, ուր նստած էին առանց դատի ու քննութեան, իրենք կը կոփէին ազգային միասնականութեան ոգին, որմէ կը հանէին հայ սփիւռքը, մոռցնել կուսային բոլոր բաժանարար տարակարծութիւնները, կը ծածանէին Սփիւռք-Հայաստան կապերը զմայլելի եփնեռանց կամարով, եւ նոր նըշանակութիւն կուսային մեր ազգային պայքարին:

Դեռ առջի օր էր, որ անոնք ազատ արձակուեցան իրենց կապանքներէն, ու դեռ երեկ էր; որ հայրենի ժողովուրդը զիրենք հրաւիրեց իշխանութեան, վստահելով մանաւանդ իրենց անձնազոհութեան եւ փառէ խորտող ու միայն ծառայելու պատրաստակամ ոգիին վրայ, քանի անոնց ամբողջովին կը պակսէր քաղաքական փորձառութիւնը: Իսկ այսօ՞ր:

Եթէ մեզմէն միւս կողմը դարձնենք, աւելի ողբալի է իրողութիւնը: Բոլոր անոնք, որ պատրաստնազուրկ դարձան, եւ բոլոր անոնք, որ 70 տարիներէ ի վեր իշխանութեան ձգտեցան, ու նաեւ մնացեալները՝ որոնց շահը կը պահանջէր իշխանազուրկ Հայաստան մը՝ պղտոր ջուրի մէջ ուսալու համար իրենց բոլոր... միլիոնները, դաշնակցեցան իրարու հետ հարուածելու համար Ազատութիւնը եւ Յոյսը խորհրդանշող նորատունկ բուփը, որ պէտք ունէր բոլորին խընամքին, գուրգուրանք մօտեցումին, անհատոյց օգնութեան:

Պահեր եղան, երբ հայրենասիրութիւնը եղերեց հայրենադաւութիւնը, ուրիշ ժամանակներ՝ երբ հոսեցաւ նաեւ հայու արիւն:

Ահա այդ անսուրբ «կոալիսիոն»-ն է, որ այսօր ձեռնը հրուագին կը շփէ, մօտալուտ «յաղթանակներու» ցնծագին հեռանկարներով:

Այդ բոլոր «ընդդիմադիր» կազմակերպութիւններու համախմբումի ջաղացքին է որ նաեւ առատօրէն ջուր կը հոսեցնէ վարչապետ Վազգէն Մանուկեան, երբ հեռանալով Հայոց Համազգային Շարժումէն՝ կը հիմնէ «Ազգային-Ժողովրդավարական միութիւն» մը:

Որքան Հայոց Համազգային Շարժումին հիմնադիր կորիզը բաղկացնող դէմքերը Ղարաբաղի կոմիտէն կազմող անհատները միակամ էին, նոյնքան անոնք զօրաւոր կը ներկայանային եւ յոյս կը ներշնչէին ժողովուրդին՝ ամենամոայլ պահերուն իսկ: Անոնց տարաձայնումը ոչ միայն պիտի տկարացնէ Շարժումը եւ իշխանութիւնը, այլ նաեւ որոշապէս բուարումի պիտի մատնէ Հայաստանի ժողովուրդին ջախջախիչ մեծամասնութիւնը, որ իր վստահութիւնը յայտնած էր «տասնմէկներուն»:

Ճառերը եւ հակաճառերը, ամբաստանութիւններն ու փոխամբաստանութիւնները այժմ յստակօրէն ցոյց կու տան, որ նախագահական աթոռի կռիւ մըն է, որ վարչապետ Վազգէն Մանուկեան կը մղէ խորհրդարանի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ, որ իրերու ընթացքով,- եւ նկատի առնելով կարգ մը ուրիշ երեւոյթներ,- միակ եւ անդարձելի թեկնածուն էր հոկտեմբեր 16-ին կայանալիք նախագահական ընտրութիւններուն: Վարչապետ Մանուկեան Սովետական Միութեան Գերագոյն Խորհրդի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ, որ իրերու ընթացքով,- եւ նկատի առնելով կարգ մը ուրիշ երեւոյթներ,- միակ եւ անդարձելի թեկնածուն էր հոկտեմբեր 16-ին կայանալիք նախագահական ընտրութիւններուն: Վարչապետ Մանուկեան

Ինքնաբերաբար ինքնաբերաբար

Ինքնաբերաբար

Ինքնաբերաբար

Ամփոփենք: Ինչպիսի՞ն էր այս տարվա ընդունելության քննահամակարգը

պատասխանում են բուհերի ռեկտորները

Երբ նախորդ տարիներին ընդունելության քննությունների մրցույթով չանցածները հանգիստ գնում էին տուն եւ նախապատրաստվում մյուս տարի իրենց բախտը փորձելու, հիմա նրանք, համարյա մոդային դարձած սովորության համաձայն, գերադասում են, ի նշան բողոքի, Նախարարների խորհրդի շենքի աստիճանների վրա նստած մնալ՝ պահանջելով պայմանական ուսուցում կամ հավելյալ տեղեր, պարզելով նոցից «պայքա՛ր, պայքա՛ր, մինչեւ վերջ» կարգախոսը: Այն այս դեպքում կոնկրետ բովանդակություն ունի՝ «վերջը» տվյալ դեպքում ուսանող համարվելու հավակնությունն է, իսկ «պայքարն», ըստ երեւույթին, ուղղված է նոր քննահամակարգի դեմ:

Իսկ ինչպիսի՞ն է մայրաքաղաքի բուհերի ռեկտորների կարծիքը: Ինչպիսի՞ առավելություններ ուներ այս տարվա քննահամակարգը նախորդ տարիներին գործողի համեմատ, որո՞նք էին բացերը, ի՞նչ մեխանիզմներ կան, որոնք առավել կատարելագործման կարիք են զգում: Պատասխանները մեծ մասամբ կրկնվում էին: Օրինակ, բոլոր ռեկտորները նշեցին, որ քննական պրոցեսի կենտրոնացումը մեծացրել է անաչառությունը եւ, որպես կազմակերպական խոշոր բերություն, առանձնացրին աղյուսների ամփոփման ձգձգումը: Չկրկնվելու համար բողոքած են պատասխանների ամենահատկանշական հատվածները:

Առաջին խոսքի իրավունքը այս քննական համակարգի ստեղծման համահեղինակներից մեկինն է:

ՅՈՒՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ
պոլիտեխնիկական ինստիտուտ

– Համարում եմ, որ այս նոր համակարգի ներդրումը զգալի առաջընթաց է ընդունելության կարգի կատարելագործման, քննչապրոցեսի անաչառության ապահովման ուղղությամբ: Դիմորդն այլընտրանքի հնարավորություն ուներ՝ միաժամանակ դիմել երեք բուհ: Ընդունող հանձնաժողովը միասնական էր, եւ բուհերը չէին կարող ներկայացնել իրենց տեղայնացված մոտեցումները: Այսինքն, ընդունելության քննությունների ասպարեզում պետական ստանդարտ ստեղծվեց: Բուհերն այսուհետ չպիտի զբաղվեն դպրոցական կրթության, ծրագրի ըստուգման հարցերով: Նրանց հիմնական խնդիրը բարձրագույն կրթության կազմակերպումն է, որակյալ մասնագետների ձեւավորումը:

Բայց, իհարկե, այս համակարգը դեռ անկատար է: Կազմակերպչական բերություններ էլ կան, որոնք երեւի կվերանան: Անկատարությունները հիմնականում վերաբերում են ծրագրավորման գործընթացին, թե այս կամ այն բուհում ինչպիսի՞ չափանիշներով է ընդունելությունն կատարվում: Դրանք նախօրոք նշված էին, բայց հետո անընդհատ փոփոխվեցին՝ հասարակական ճնշման եւ զուտ ուրիշ գործոնների ազդեցությամբ: Բայց կատարված է սկզբունքորեն մի մեծ քայլ առաջ, եւ հասարակական միջավայրն աղեղն գնահատել է դրա: Ամենուրեք սանում են ծնողների միահամուռ դրական արձագանքը: Սա մենակն է միայն: Վերջնակետը բուհերի ընդունելության քննությունները դպրոցի ավարտականների հետ համատեղելն է:

ԹՈՐԳՈՄ ՆԱԼՉԱՋՅԱՆ
ժողտնտեսության ինստիտուտ

– Մի քանի ամսվա ռեկտոր եմ, եւ ինձ համար շատ հաճելի էր, որ մեր բուհում քննություններ չեղան: Պարզ, անկեղծորեն ասում եմ՝ այդ կեղծից հեռու մնացինք: Թեեւ ի պաշտոնե հանձնաժողովի անդամ էի, բայց ոչ մի անգամ չեմ հետաքրքրվել, ոչ էլ հրավիրել են քննություններին մասնակցելու: Ինչքան գիտեմ, ոչ մի ռեկտոր էլ այդ հարցերով չի զբաղվել ու չգիտե, տեղյակ չէ, թե ինչ է արել բարձրագույն կրթության եւ գիտության պետական կոմիտեն: Այնուամենայնիվ, քննությունները միացյալ անցկացնելու գաղափարը շատ դրական գաղմեր ունի: Նախորդ տարիների համեմատ ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծված, որպեսզի լավ իմացողներն ընդունվեն: Սակայն, օբյեկտիվ լինելու համար պետք է ասել, որ գուցե չհիմնավորված, աղաղաղված, բայց բացառական բազմաթիվ երեւույթների կարգությամբ դրժոհություններն էլ են շատ: Իսկ բերությունները հիմնականում կազմակերպչական բնույթի էին: Խնդրեմ, մինչեւ հիմա չենք ստացել ընդունելության քննությունների արդյունքները՝ ոչ գրավոր աշխատանքները կան, ոչ ստուգման գրքույկները... Որպես ռեկտոր, պարտավոր էի սեպտեմբերի 1-ին ընդունվածներին հրամանագրել՝ *«ընդունելության քննությունները հաջող հանձնած եւ մրցույթով անցած այսինչ-այնինչին համարել առաջին կուրսի ուսանող»*... Ես իրավական հիմք չունեմ հիմա այդ հրամանի համար: Այնինչ, ուսանողները պիտի արդեն կրթաթոշակ, ուսանողական տոմսեր, գրադարանից օգտվելու իրավունք ստանային: Կոմիտեի ցուցակները փակցված են, եւ ես նույնքան գիտեմ, թե ինչպես են նրանք քննություններ հանձնել եւ ընդունվել, ինչքան փողոցով անցնող յուրաքանչյուր մարդ: Ու եթե փողոցից մեկն էլ գա ու հայտարարի, որ մեր ուսանողն է՝ պիտի հավատամ...

Գուցե պատճառն այն է, որ սա առաջին տարին էր, չնախատեսված դժվարություններ կային, գուցե կոմիտեն իր հնարավորություններով ի վիճակի չէ այսպիսի



Լուսանկարը Լեւոն ՄՈՍԵՅՈՍՅԻ

ահռելի ծավալի աշխատանք կատարել, գուցե համակարգն այս առումով իրեն չի արդարացնում՝ չգիտեմ, չեմ կարող ասել:

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ
գեղարվեստաթատերական ինստիտուտ

– Արվեստի բուհերում ընդունելության քննությունների համակարգում փոփոխություններ համարյա չեղան: Ինչպես միշտ, ինքներս կազմակերպեցինք մեր հիմնական մասնագիտական առարկաների քննությունները: Հայոց լեզվի քննությունն էր միայն, որ կենտրոնացված ընդունվեց: Բայց չի կարելի բանդակագործին կամ դիզայներին նույն թելադրությունը տալ, ինչ բանաստեղծին կամ պատմաբանին: Այդ պատճառով, 4–5 տաղանդավոր գեղանկարիչներ, որոնք բարձր տվյալներ էին ցուցաբերել մասնագիտական քննության ժամանակ՝ հումանիտար առարկաների դիմորդների հետ համահավասար պայմաններում թելադրություն գրելով՝ դուրս մնացին: Կարծում եմ, որ կոմիտեն հաջորդ տարի պիտի հաշվի առնի յուրաքանչյուր բուհի առանձնահատկությունները, դիմորդների մասնագիտական կողմնորոշումը:

ՄԻՔԱՅԵԼ ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ
գյուղատնտեսության ինստիտուտ

– Այս համակարգի պատճառով շատ տուժեց գյուղական երիտասարդությունը, որն առաջ 80 տոկոսով համալրում էր մեր բուհը: Չնայած հիմա ով գտնում է, թե ինստիտուտ է ընդունվել, իր ցանկությամբ գալիս ու դասերին մասնակցում է, բայց կարող եմ ասել, որ մեծ մասամբ քաղաքների դիմորդներն են ընդունվել: Իհարկե, քաղաքի համեմատ գյուղական դպրոցների մակարդակը շատ ցածր է: Նախկինում մենք նախապատրաստական բաժանմունքներով եւ այլեւայլ միջոցներով էինք լրացնում այդ բացը, բայց հիմա արդեն նախապատրաստական բաժանմունքները վերացված են: Օրինակ, հանրապետության համար շատ կարեւոր է հիդրոմելիորացիան, եւ այդ բնագավառում մասնագետների խիստ կարիք է զգացվում: Այս տարի հիդրոմելիորացիայի Ֆակուլտետում 50-ի փոխարեն 10 մարդ ընդունվեց: Դիմորդների ճնշող մեծամասնությունը երջաններից էր, բոլորն էլ անբավարար ստացան եւ դուրս մնացին: Համարյա 100 տեղով թերակատարել ենք ընդունելության պլանը: Այսպես, հատկապես գյուղական բնակչության հետ գործ ունեցող բուհերը չեն կարող համաձայնվել եւ հիմա ծանր վիճակում են *(ի դեպ, անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի ռեկտոր Մրհեր Մելոնյանը հրաժարվեց հարցերին պատասխանելուց՝ Ա.Թ.)*: Հետագայում այս հարցերի լուծման ժամանակ պիտի հաշվի առնվի գյուղական դպրոցներում տիրող իրական վիճակը, եւ գոնե այս անցման երջանում դրանից թելադրվող ընդունելության համակարգ մշակվի:

ՆՈՐԱՅՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Երեւանի պետական համալսարան

– Ենթադրում եմ, որ եկող տարի ընդունելության ուրիշ համակարգ կլինի: Սա եւ պետական պլանավորման գործող համակարգը իրար հետ այնքան էլ համահունչ չեն: Կառավարությունը որոշ բարձր պահանջարկ վայելող մասնագիտությունների տեղերը ճնշման պատճառով մի քանի անգամ ավելացրեց, բայց որոշ տեղեր էլ ընդհանրապես դիմորդներ չեղան: Հետո միայն, դասերը սկսվելուց մի քանի օր առաջ ես իմանում, որ ահա ա՛յս բնագավառում կադրերը չեն բավարարում: Ճիշտ է, հիմա բուհերն այլեւս չեն զբաղվում աշխատանքի տեղավորման խնդրով՝ շուկան պիտի որոշի տվյալ բնագավառում մասնագետների պահանջարկը, բայց այս երջանում պլանավորումը պիտի ավելի ճկուն լիներ:

ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
բժշկական ինստիտուտ

– Այս տարվա ընդունելության քննությունների հետ կապված ոչ մի հարցի առայժմ չեմ կարող պատասխանել՝ հստակ տվյալներ չունեմ, չկան: Ուսումնական տարվա սկզբից արդեն երկու շաբաթ է անցել, բայց մինչեւ հիմա, օրինակ, ուսանողներ կան, որոնց անունները երեք Ֆակուլտետների ցուցակներում էլ միաժամանակ գրված են: Ահա այսպիսի վիճակ է:

Երբեմն պատշաճական անարյուն լրատվությունները շատ ավելի խոսուն են, քան այդ նյութին առնչություն ունեցող մարդիկ: Մոտավոր ենթադրություններ միայն կարելի է անել, թե ինչ պատկերի արտացոլումն է օգոստոսի 31-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակված այս սեղմ լուրը, որն անմիջական կապ ունի քննարկվող առարկայի հետ:

«ՀՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Օգոստոսի 29-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդում տեղի ունեցավ ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության պետական կոմիտեի ղեկավարության եւ բուհերի ռեկտորների խորհրդակցություն վարչապետ Վազգեն Մանուկյանի նախագահությամբ:

Քննարկվեցին բուհերում ընթացիկ տարվա ընդունելությանը վերաբերող հարցեր: Բուհերի ղեկավարներին առաջարկվեց հրնարավորություններ ստեղծել դրական գնահատականներով դուրս մնացած դիմորդներին վճարովի ուսուցման համակարգում ընդգրկելու համար: Առաջարկը հիմնականում ընդունվեց ըմբռնումով: Այլ մոտեցում ցուցաբերեց բժշկական ինստիտուտի ղեկավարությունը, համարելով, որ առկա կլինիկական բազայի, նյութատեխնիկական միջոցների եւ ուսումնական մասնաշենքերի սահմանափակ հնարավորությունները թույլ չեն տալիս բավարարելու դիմորդների այն պահանջը, թե պետք է ընդունել մրցույթով չանցած բոլոր դրական միավորներ ունեցողներին:

Բժշկական ինստիտուտի ղեկավարությանը հանձնարարվեց առողջապահության նախարարության հետ համատեղ մեկ անգամ եւս քննարկել հարցը, աշխատելով գտնել լուծման ուղիներ»:

Թե ինչ եղավ հետո՝ վկայում է Նախարարների խորհրդի սեպտեմբերի 9-ի թիվ 488 կարգադրությունը:

«1. Բժշկական ինստիտուտ առաջին հայտով դիմած եւ մրցույթից դուրս մնացած մինչեւ 200 դիմորդի վճարովի հիմունքներով ընդունել 1992–93 ուսումնական տարվա հատկացվելիք վճարովի ուսուցման տեղերի հաշվին՝ ուսումնառությունը սկսելով 1992 թվականի սեպտեմբերի 1-ից»:

Ըստ երեւույթին, 1992 թվականին-էլ մրցույթից դուրս մնացածները կընդունվեն 1993 թվականի հաշվին եւ այդպես շարունակ...

Այս կապակցությամբ բժշկական ինստիտուտի ռեկտորին մի լրացուցիչ հարց տվեց. ***«Արդյո՞ք չի կարելի ենթադրել, որ անվճար եւ վճարովի այս համակարգերի կրկնակի գոյակցության պայմաններում 4–5 տարի հետո կրկնակի կավելանան բարձրագույն կրթությամբ գործազուրկները»:*** *«Անպայմա՛ն կարելի է ենթադրել: Եթե այսօրվանից էլ Հայաստանում ոչ մի բժշկի դիպլոմ չտանք՝ համոզված կարող եմ ասել, որ մոտակա 10 տարիների ընթացքում էլ հանրապետությունը դրանց պակասը չի զգա,– պատասխանեց Վիլեն Հակոբյանը,– աշխարհի բազմաթիվ զարգացած երկրների համեմատ բնակչության 10 հազար շնչին ընկնող բժիշկների քանակով մենք կրկնակի անգամ առաջ ենք անցել: Այնպես որ, պարզ է, որ մեր կադրերի մեծամասնությունը անօգուտ ժամանակ են վատնում եւ աղագա գործազուրկներ են»:*

Բայց նույնիսկ այս ամենն այլի առաջ ունենալով՝ վարչապետի կարգադրությունը ենթակա է կատարման: Իհարկե, իսկապես ամփոփելու ժամանակ չէ դեռ: «Դուք մեզ մոտ եկեք առաջին քննաշրջանի ավարտից կամ թեկուզ մեկ ամիս հետո»,– խորհուրդ տվեց ռեկտորներից մեկը:

ՍՈՆԱ ԽՈՐՍՈՅԵԼՅԱՆ



Ծաղրանկարը Սուրեն ՔՈՐՈՅԱՆԻ

digitised by A.R.A.R.@

Բախթիարի գործը. Սամբուլից մինչեւ Թեհրան

Բախթիարի առեղծվածային սպանության եւ այլեւայլ ուժերին այն վերագրելու մասին բազմաթիվ իրարամերժ վարկածներ կան: Ենթադրվում էր, որ սպանության նպատակը իրանա-ֆրանսիական հարաբերություններում գորշ մթնոլորտ ստեղծելու դիտավորությունն էր: Ոմանք սպանությունը վերագրեցին Իրանի ազգային դիմադրության խորհրդին: Սակայն կան նաեւ Թեհրանի վարչակարգին ուղղված մեղադրանքներ, որոնք արտաքուստ տրամաբանական թվալով հանդերձ, զուրկ են բավարար հիմնավորումներից: Ստորեւ նրանցից մեկը՝ «Լը Պուենն» հանդեսի սեպտեմբերի 13-ի հրապարակումը:

Թուրքիայի հետ: Ըստ երեւույթին, գործողությունը վերջնամշակվել է այդ երրորդ երկրում, որպեսզի հետքերը չտանեն Իրան: Ապարդյուն ջանքեր: Մարդասպանները յուրովի մատնել են իրենց տերերին: Բացահայտված համարները իրոք համապատասխանում են Ֆրանսիա անցնելուց առաջ Սամբուլում մարդասպանների վարձած երկու հարկաբաժիններին: Դրանց չորս կենվորներից են Մոհամադ Ազադին եւ Ալի Ռադ Վահիլին: Վերջինս ձերբակալվեց Ժենեւում օգոստոսի 21-ին եւ այսօր բանտարկված է Ֆրանսիայում: Մյուս երկու «գործակալները» հաղթեղորեն վերադարձել են Թեհրան, սակայն դասավոր Բրյուգիերի դահանջով բուրք ոստիկանները ձերբակալել են բազմաթիվ հանցակիցների, այդ թվում նաեւ այն անձին, որը վարձել էր հարկաբաժինները եւ տրամաբանորեն նպաստել գործողությանը:

Իրանցի այդ գործակալը արագորեն խոստովանել էր, որ մարդասպանները գործել են Թեհրանի հատուկ ծառայությունների հաշվին: Մասնավորապես այդ «խանութպանը» եւ «տեխնիկը» հավաքագրվել էին «հետախուզության նախարարության» կողմից, որն այսօր գլխավորում է Ալի Սալահյանը: Վարձակալին մեղադրանք է ներկայացվել երկու ուրիշ հանցակիցների հետ, որոնք մարդասպանների համար հայթայթել էին բուրքական կեղծ անձնագրեր:

Քննիչները այսօր առավել դյուրությամբ են վերականգնում սպանության սցենարը: Գործողության կենտրոնական դեմքը, անշուշտ, Ֆարիդուն Բոյերահմադին է, Բախթիարի հզոր ցեղի (մոտ 600 անձ) այդ նախկին ծառայողը, որին ենթարկվում էին հազարավոր բանվորներ: Բոյերահմադին Ֆրանսիա է եկել 1984 թվականին եւ բազմաթիվ մանր ու դատահական գործերով զբաղվել, մինչեւ ի վերջո Ռենսում ավտոկայանատեղի դահակ դառնալը: Իրանում ամուսնացել է իսլամական մի կոմիտեի հարող կնոջ հետ եւ հետագայում հավաքագրվել Իրանի գաղտնի ծառայությունների կողմից, որոնք հանձնարարել են բռնանցել Բախթիարի մոտ: Մոտավորապես նույն ժամանակահատվածում սրանից երեք տարի առաջ, Ֆրանսիայի գաղտնի ծառայությունները նրան բացահայտել են որպես իրանական գործակալ, բայց գործին ընթացք չի տրվել...

Բախթիարի վստահությունը շահելով, Բոյերահմադին արագորեն դառնում է նրա ընտանիքի մերձավորներից մեկը, տանը մանր-մունր աշխատանքներ անում եւ մասնակցում շահի նախկին վարչապետի հիմնած ընդդիմության շարժման նիստերին: Իսկ օգոստոսի 6-ին՝ այդ ճակատագրական օրը նա «հատուկ առաքելությամբ» եկած երկու մարդասպաններին մտցրեց Բախթիարի առանձնատուն: Կիսաաշտոնական հայտարարությամբ Ալի Ռադ Վահիլին սպանության մեջ մեղադրում է Բոյերահմադիին եւ նրա հանցակից Մոհամադ Ազադիին, բացատրելով, որ ինքը խոհանոցում էր քաշվել, որպեսզի չլսի սպանվող Բախթիարի ճիչերը: Նա իր առաքելության իրական նպատակը իմացել է Փարիզ հասնելուց հետո միայն:

Այս վարկածը կասկածների տեղիք է տալիս: Բայց կամաց-կամաց դատավորի եւ քննչական խմբի մանրակրկիտ ժողոված փաստերին բախվելով, Ալի Ռադ Վահիլին կարող է չդիմանալ եւ հայտնել իսկական հանցակիցների անունները: ■

Միշել Աուն. գեներալի ձայնը՝

Գեներալ Միշել Աունը անցյալ տարի Լիբանանում կառավարական ճգնաժամի հետեւանքով ադաստանեց Բեյրութի Ֆրանսիական դեսպանատանը: Տասը ամիս այնտեղ մնալուց հետո, մոտ կես ամիս առաջ Ֆրանսիական անվտանգության ծառայության ջանքերով նրան հաջողվեց ընկնել Ֆրանսիա: «Լը Պուենն» հանդեսը սեփական մեկնաբանությունն է տալիս ընդդիմության մեջ հայտնված Աունի դերին:

Գեներալ Միշել Աունը Մարսելում իրեն տարագիր չի զգում. Միջերկրական ծովը եւ կիզիչ արեւը հիշեցնում են Բեյրութը: Նույնիսկ մարսելյան առանձնատունը ինչ-որ չափով նման է Բեյրութի իր տանը. զինված եւ զրահաբաճիկ հագած դահակներ, էլեկտրական ցանկապատ, տեսախցիկներ եւ զինված մարդիկ՝ այգու բոլոր կողմերում: Գեներալին լավ են դաստդանում: Այցելուներին խուզարկում եւ լուսանկարում են: Իսկ ծովափի մոտ դարեկանավեր են երթում:

Բեյրութից հեռանալուց առաջ գեներալը 10 ամիս անցկացրեց Ֆրանսիայի դեսպանատանը: Երկարատեւ քննարկումներից հետո նրան ներում շնորհվեց՝ հնգամյա տարագրության դայմանով, որի ընթացքում նա դեսք է լուռ մնա: Հակառակ դեպքում, գրության այդ քայլը չեղյալ կհամարվի: Այդ սպառնալիքը գեներալի ժոքին է հարուցում: Աունը իրեն լսողներին հայտարարում է, որ համենայն դեպս իմը հայրենիք չի վերադառնա այնքան ժամանակ, քանի դեռ Լիբանանը չի ազատագրվել Սիրիայի օկուպացումից:

Լռության դատապարտված Միշել Աունը շատ հյուրեր է ընդունում. լիբանանցիներ, Ֆրանսիացիներ: Նա բնավ թեւաթափ չի լինում: Ընկերների կարծիքով, նրա վճռականությունը չի նվազել: Նա ասում է, որ ամենուրեք փչում է ազատության եւ ժողովրդավարության քամին՝ Աֆրիկայում, Արեւելքի երկրներում, ԽՍՀՄ-ում: Միայն Լիբանանն է, որ դատմությանը համաքայլ չի գնում: Աունը հավատացնում է, որ իր միակ երազանքն է Բեյրութի փողոցներում զբոսնել որպես ազատ մարդ:

Միշել Աունը ոչնչով չի արդարացնում նախագահ Էլիաս Հրաուիին, հեգնանքով ասելով, որ նա ընտրվել է Սիրիայի հատուկ ծառայությունների մի զորանոցում: Աունը շատ խիստ է նաեւ ամերիկացիների հանդեպ, որոնք կամայականորեն որոշեցին զոհաբերել Լիբանանը: Վաշինգտոնը, ասում է նա, ամենուրեք խրախուսում է ժողովրդավարությունը, բացի մեր տեղաշրջանից:

Դա արվում է նավթի դատճառով: Ամերիկան դատում է ռազմավարական տերմիններով եւ կիրառում հետեւյալ ասույթը. «Անհնար է ձվածեղ անել, առանց ձու կոտրելու»: Իսկ ձուն Լիբանանն է:

Ի՞նչ հույս կա Լիբանանի համար: Պետք է Սիրիային թույլ չտալ մարսելու երկիրը, որ նա աղեն կալ է տվել: Ասատի դիտավորությունները դժվարանում են ԽՍՀՄ-ում տեղի ունեցող իրադարձությունների դատճառով, ինչպես նաեւ Իրանի ռազմական ուժի խորտակման հետեւանքով: Դամասկոսում իրավիճակի փոփոխման համար դարատիր է, որ փոխվի նաեւ վարչակարգի բնույթը, ստեղծվի ժողովրդավարական համակարգ:

Միշել Աունը շատ չի խոսում իր աղագաղդերի մասին: Նրա ժողովրդականությունը շատ մեծ է քրիստոնյաների շրջանում: Զգալի թվով մահմեդականներ նույնպես երկար ժամանակ համակրել են այդ «փոքրիկ գեներալին», որը մարտահրավեր էր նետել հանցախմբերին եւ աշխարհազորին, քաղաքական «մեծ ընտանիքներին» եւ ուզում էր վերացնել կաբառակերությունը:

Բայց «ազատագրական դատերազմի» արկածախնդրությունը, աղա լիբանանյան ուժերի (քրիստոնյաների աշխարհազորի) դեմ եղբայրասպան կռիվները ահավոր արդյունքի հանգեցրին. 2500 սպանված, հազարավոր վիրավորներ, քրիստոնյաների հենակետի ոչընչացում, 8 միլիարդ դոլլարի հասնող կորուստներ, 300-400 հազար քրիստոնյաների արտագաղթ: Այնպես որ, երբ սիրիական զորքերը հոկտեմբերի 13-ին անդադարելիորեն հարձակվեցին Միշել Աունի վրա, լիբանանցիները լուռ գոհունակությամբ ընդունեցին «սիրիական խաղաղությունը»:

Գեներալ Միշել Աունը զգում է, որ Թաեֆի համաձայնագրից ամենից շատ տուժել են շիաները: Նույն կարծիքին են այդ համայնքի ղեկավարները եւ դրուզները:

Արդյոք դա բավարա՞ր է ազգային դիմադրության գոյության համար, որի մասին երազում է Միշել Աունը: Աղագան ցույց կտա, թե «փոքրիկ գեներալի» տարագրությունը արդյոք կորած զինվորի՞ տարագրություն է, թե քաղաքական ղեկավարի:

«Լը Պուենն»,
13 սեպտեմբեր 1991

Իրանի տարանջատման վտանգը կամ ինչպես են ուզում նոր Ազարբայջան ստեղծել

Փլուզման ենթակա Խ. Միությունում ծավալվող աննախադեպ իրադարձությունները եւ դրանց արդյունքը հանդիսացող հավանական հետեւանքները լայն արձագանք գտան ոչ միայն Իրանում, այլեւ նրա սահմաններից դուրս: Այդ իրադարձությունների հանդեպ Թեհրանի որդեգրած սրտի եւ իրատեսական քաղաքականությունը անվերադատ չընդունվեց Իրանի ընդդիմադիր ուժերի կողմից: Ոմանց կարծիքով, Իրանը ստեղծված իրավիճակում չկարողացավ ճիշտ գնահատել դատը, ոմանք էլ երկրի ամբողջականության սպառնացող վտանգը բարդում են իշխող վարչակարգի վրա:

Լոնդոնում հրատարակվող «Քեյհան» շաբաթաթերթի խմբագրական հոդվածներից մեկում նշված է, որ Խ. Միությունում տեղի ունեցած ցնցող իրադարձությունները, որոնց հետեւանքով փաստորեն իմաստազրկվեց այդ երկիրը բնորոշող անվանումը, հանկարծակիի բերեցին Իրանի արտաքին քաղաքական դատասխանատուներին:

Իրանի հյուսիսային սահմաններում, շարունակում է թերը, կոմունիստական կայարության փլուզմամբ, հատկապես մահմեդական հանրապետությունների անկախության հռչակումով անշուշտ չի ավարտվում այն գործընթացը, որին ձգտում են անկախության հավակնություն ունեցող հանրապետությունները: Հոդվածի հեղինակը գտնում է, որ ստեղծված իրավիճակում Իրանը կարող էր մեծ օգուտ ստանալ: Իր տեսակետը հիմնավորելու նպատակով հոդվածագիրը նշում է, թե խորհրդային հանրապետություններից գրեթե ոչ մեկը չի կարող տնտեսապես անկախ գոյատեւել:

Մյուս կողմից, շարունակում է հոդվածագիրը, ազգամիջյան բախումները եւ ստալինյան չարաբաստիկ քաղաքականության արդյունքը հանդիսացող տարբեր մարզերից եւ երկրամասերից մարդկանց զանգվածային տեղահանումը ներկա անորոշ եւ անկայուն դայմաններում ավելի շեշտակի է դարձնում քաղաքացիական դատերազմի, ցեղասպանությունների եւ արյունահեղությունների վտանգը:

Որքան արյուն կթափվի, եթե ադրբեջանցիները հայերի նկատմամբ ունեցած իրենց դարավոր թշնամանքից դրդված ցանկանան Ղարաբաղի ազգաբնակչության նկատմամբ հաշվեհարդար տեսնել, ի՞նչ տեղի կունենա, եթե մարքսիզմ-լենինիզմի շղթաներից ձերբազատված հանրապետությունները չհանդուրժեն տվյալ հանրապետություններում փոքրամասնություն կազմող ռուսներին եւ իրենց ազգայնամոլական զգացմունքներին հագուրդ տալու համար ինքնաբաստասան տեսնել նրանց հետ:

Հոդվածագրի կարծիքով, կայարության լուծը թոթափած հանրապետությունների ադագան անկանխատեսելի է: Այնուամենայնիվ, Խ. Միությունում տեղի ունեցող ռազմաքաղաքական ցնցումների մի զգալի մասը, հոդվածագրի տեսակետով, վերաբերում է Իրանին սահմանակից հանրապետություններին: Խ. Ադրբեջանի տարածքի մի մասը, նշված է հոդվածում, ոչ հեռու անցյալում դատկանում էր Իրանին: Տաջիկստանում խոսում եւ գրում են դարսկերեն: «Իրանական աշխարհի» ընդգրկման դորտը նույնիսկ անցնում է փլուզվող Խ. Միության հանրապետությունների սահմաններից: Այդ «իրանական» տարածքների ժողովուրդները, ավելացնում է հոդվածագիրը, եթե Թեհրանում կարողանային հենարան գտնել, անտարակույս նրանք բարդ դայմաններում կաղավինեին նրան եւ, ամենայն հավանականությամբ, «Իրանական աշխարհը» կարեւոր քաղաքական դեր կստանձներ: Եթե լիներ մինչհեղափոխական Իրանը՝ իր տնտեսական, քաղաքական ուժով եւ կայունությամբ, այսօր Թեհրանը կարող էր դառնալ մի նոր «Մոսկվա», որի ձգողական ուժն իր շուրջը կգրավեր ոչ միայն Բաքուն եւ Դուշանբեն, այլեւ Հերատն ու Քաբուլը, վերջում եզրակացնում է հոդվածագիրը:

Նույն թերթի մեկ այլ խմբագրական հոդվածում, որը կրում է *«Փլուզվող խորտաս»* վերնագիրը, նշված է.

«Խ. Միությունում տեղի ունեցող աննախադեպ իրադարձությունների հետեւանքով Իրանում ստեղծվել է միանգամայն նոր իրավիճակ: Ներկայումս Իրանը դետք է իր հյուսիսային սահմաններին նայի այլ տեսանկյունից: Այսդես թե այնդես, Իրանի հյուսիսում գտնվող խորհրդային հանրապետությունները կամ անկախություն կստանան, կամ կենթարկվեն մի նոր համակարգի մեջ, որտեղ քաղաքական, տնտեսական եւ մշակութային առումով կհարգվի նրանց ինքնավարությունը: Հետեւաբար, առաջին անգամ այդ դետությունները միջնորդ կհանդիսանան Իրանի եւ Ռուսաստանի միջեւ, եւ հյուսիսում գտնվող հանրապետությունների հետ Իրանի փոխհարաբերություններին վերաբերող հարցերը կլրջնարկվեն նոր մթնոլորտում եւ կդրվեն նոր հիմքի վրա:

Իրանի ղեկավարության տարատեսակ եւ անվճռական դիրքորոշումն օգոստոսյան իրադարձությունների նկատմամբ ցույց տվեց, որ Իրանի դատասխանատուներին շատ է անհանգստացնում Խ. Միության վերափոխումների երկարաժամկետ քաղաքական ազդեցությունը: Նրանք զգում են, որ երկրի արտաքին քաղաքականության հիմքերից մեկը կանգնած է փլուզման վտանգի առջեւ»:

Փլուզվող կայարությունում տեղի ունեցած վերջին իրադարձությունների մասին «Քեյհանը» ներկայացնում է եւս մեկ հոդված, որի հեղինակը՝ տիկ. Սոլթանին, հակառակ վերը նշված հոդվածների հեղինակների, այն կարծիքին չէ, որ Իրանը ներկա իրավիճակում կորցնում է դահը եւ չի փորձում «տեր կանգնել» դարսկախոս եւ մահմեդական ժողովուրդներին, այլ մտահոգությամբ գտնում է, որ իր հայրենիքին սպառնում է տարանջատման վտանգը, եւ այդդես էլ վերնագրում է հոդվածը՝ *«Իրանի տարանջատման լուրջ վտանգը»:*

Սոլթանին նշում է, որ Ազարբայջանի անջատողականները գործարքի մեջ մտնելով Խ. Ադրբեջանի ղեկավարների (ստալինիզմի ամենաեռանդուն ջատագովների) հետ, բացում են երկու Ադրբեջանների սահմանները եւ երկիրը մոտեցնում տարանջատման անդունդի եզրին:

Իսկ ձախ ուժերին դատկանող *«Ռահ-է Ազադի»* («Ազատության ուղի») թերթն իր համարներից մեկում, խոսելով նույն վտանգի մասին, մասնավորապես նշում է.

«Իրանի Ազարբայջան նահանգի մտավորականների եւ քաղաքական ուժերի մեծ մասին համախմբում է այն ազգայնական հակվածությունը, որի վերջնական նպատակն է իրանական Ազարբայջանի անկախացումը եւ Խ. Ադրբեջանի հետ միասնական դետության ստեղծումը: Այդ ուժերի մեջ, մտավորականության ներկայացուցիչներից բացի, ներգրավված են նաեւ «Թուդե» եւ «Մսարիյյաթ» կուսակցությունների նախկին անդամները: Տարբեր մշակութային միջոցառումների ժամանակ նշված հոսանքները, տարածելով ադրբեջանական նրգն ու դարը եւ ժողովրդական բանահյուսությունը, լայն ազգայնական գործունեություն են ծավալում: Նրանց գործունեության մեջ շեշտակիորեն արտահայտվում են հակադարսկական տրամադրությունները:

Նրանց ստրատեգիան է Խ. Ադրբեջանի անջատումը եւ միասնական անկախ դետության շրջանակներում նրա միացումը իրանական Ազարբայջանին: Ժողովրդավարությունը չմերժելով հանդերձ, նրանք Ֆարս ժողովրդավար մտավորականների նկատմամբ լավատեսորեն չեն տրամադրված եւ վերջիններիս անվանում են դանիրանիստներ եւ ոչ մի կերդ չեն հաշտվում Իրանի տարածքային ամբողջականության գաղափարի հետ: Այդ չափազանց գործուն եւ զորեղ հոսանքները իրենց գաղափարի քարոզչության համար ոչ մի ջանք չեն խնայում եւ բավականին մեծ թվով մարդկանց ներգրավել եւ ներգրավում են իրենց ազդեցության դորտը»:

Գրիգոր ԱՌԱՔԵԼՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Թուրքիայի դերն ու նշանակությունը Վաշինգտոնի քաղաքական ծրագրերում

Թուրք-ամերիկյան փոխհարաբերությունները թեւակոխում են նոր փուլ

Սառը պատերազմի տարիներին Թուրքիան, որ հանդես էր գալիս Խորհրդային Միության դեմ առաջին գծում, որպես ՆԱՏՕ-ի անդամ երկիր, խիստ կարեւոր նշանակություն ուներ Արեւմուտքի համար: Սակայն, Վարշավյան ուխտի լուծարումով, երբ վերջ տրվեց սառը պատերազմին, Թուրքիայի դերը Արեւմուտքում որպես ՆԱՏՕ-ի գծով դաշնակցի զգալիորեն նվազեց: Թուրքիայի կառավարող շրջանները պետության երբեմնի նշանակությունն ու կշիռը ապահովելու ճանապարհներ էին որոնում: Եւ ահա վրա հասավ Պարսից ծոցի ճգնաժամը: Օգտագործելով այդ հնարավորությունը, Թուրքիան ամեն ինչ արեց աղացուցելու, թե որքան կարեւոր դեր կարող է խաղալ Մերձաւոր Արեւելքում Արեւմուտքի շահերը պաշտպանելու գործում: Սակայն, Իրաքի հանդեպ բշնամանքի հասնող նրա եռանդուն քաղաքականությունը, որ խիստ քննադատվում էր երկրում ինչպես ընդդիմության, այնպես էլ մամուլի կողմից այն պատճառաբանությամբ, թե Արեւմուտքը վաղ թե ուշ, միեւնույն է, հեռանալու է տարածաշրջանից, իսկ Թուրքիան հավերժ գոյատեւելու է Իրաքի հետ հարեւանությամբ, նպատակին չհասավ:

Նախ, որ եւրոպական պետությունները ոչ մի զիջում չարեցին Թուրքիայի առաջ ընդհանուր շուկայի դռները գոնե կիսով չափ բացելու համար, կտրականապես մերժելով նաեւ Մերձաւոր Արեւելքում նոր դեր ստանձնելու նրա պահանջը: Փաստորեն ըստացվեց այնպես, որ Թուրքիայի հակահրաքյան քաղաքականությունը անգամ չգնահատվեց Իրաքի դեմ հանդես եկող արաբական երկրների, նույնիսկ Քուվեյթի կողմից: Դեռ ավելին, ցամաքային պատերազմի ավարտից անմիջապես հետո երեւան եկավ այսպես կոչված *«քրդական ինքնավարության հարցը»*: Եւրոպայի մայրաքաղաքներում, ինչպես նաեւ Վաշինգտոնում իրարի անընդմեջ արվող հայտարարությունները Թուրքիայում գնահատվեցին որպես դավաճանություն դաշնակցի հանդեպ, եւ անհանգստությունն այդ առթիվ անչափ մեծ եղավ: Թուրքական մամուլն աղմուկ-աղաղակ բարձրացրեց, համեմատելով երկրի իրավիճակը նախասեւրյան ժամանակների հետ, ակնարկելով մասնատման վտանգը՝ կապված քրդական հարցի հետ:

Այսպիսով, Թուրքիայի քաղաքական բոլոր ձեռնարկումները Պարսից ծոցի ճգնաժամի օրերին, որոնք անմիջականորեն ուղղված էին պետության նշանակության պահպանմանը ՆԱՏՕ-ի դերի նվազման պայմաններում, անհաջողության մատնվեցին: Եւ դրա ամբողջ պատասխանատվությունը թե ընդդիմադրության եւ թե բուրքական մամուլի կողմից բարդվեց Թուրգուտ Օզալի վրա: Նկատի ունենալով Օզալի զբաղեցրած պաշտոնը Թուրքիայում, կարող ենք ասել, որ մամուլի սանձարձակությունները նրա հանդեպ աննախադեպ երեւույթ էին երկրի պատմության մեջ: Մամուլը նույնիսկ մեղադրեց հանրապետության նախագահին Վաշինգտոն կատարած այցի համար, թե դա անժամանակ էր: Սակայն հենց այդ այցի ընթացքում սկիզբ դրվեց թուրք-ամերիկյան համատեղ ստրատեգիական ծրագրի մշակմանը: Այդ ծրագրով Թուրքիան ոչ միայն պահպանում էր իր նշանակությունը ԱՄՆ-ում, այլեւ այն զգալիորեն աճում է:

Որն է այդ ծրագրի էությունը: *«Հյուրրիյեթ»*-ի վաշինգտոնյան թղթակից Սեղաթ Էրգինը, որ հանդես է գալիս թերթի էջերում բացառապես Թուրքիա-ԱՄՆ փոխհարաբերությունների առնչությամբ, անդրադառնալով ստրատեգիական համատեղ ծրագրի բնույթին, նշում է, թե այն դրսեւորվելու է հետեւյալ ոլորտներում.

Նավթ. ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի նրա դաշնակիցների տնտեսության կախվածությունը Մերձաւոր Արեւելքում արտահանվող նավթից, ըստ հաշվարկների, տեւելու է մինչեւ 21-րդ դարի 30-ական թվականները: Իսկ Թուրքիան տեղ է գրաղեցնում այնպիսի մի շրջանում, որտեղ արտահանվող նավթը կենսական նշանակություն ունի Արեւմուտքի համար: Ելնելով այս փաստից, կարող ենք ասել, որ Պարսից ծոցի առնչությամբ դրսեւորվող ռազմական նոր դաշինքը Թուրքիայի հետ (ՆԱՏՕ-ի շրջանակներից դուրս) մեծ արժեք է ներկայացնելու Միացյալ Նահանգների շահերի տեսակետից:

Խորհրդային Միություն. Թուրքիայի արեւելյան սահմաններից մինչեւ Միջին Ասիա ընկած տարածքում սպասվում է քաղաքական իրավիճակի կտրուկ աղակայունացում: Նման պայմանների առկայության դեպքում Թուրքիան դառնալու է այն դուռը, որտեղից Վաշինգտոնը հնարավորություն կստանա ներթափանցել աղակայունության շրջանները: Բացի այդ, հնարավոր չէ կանխորոշել, թե աղազայում ինչ ընթացք կստանան ԱՄՆ-ի փոխհարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ: Երկու երկրների փոխհարաբերությունների սրման դեպքում, վաշինգտոնյան քաղաքագետների համաձայն, Թուրքիան նպաստելու է ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը ԽՍՀՄ-ի դեմ:

Մոդել. Չի բացառվում, որ ԽՍՀՄ-ը մոտ աղագայում մասնատվի, եւ միջազգային ասպարեզում հայտնվեն ինքնուրույն նոր պետություններ: Նկատի ունենալով Թուրքիայի մշակութային կապերը միութենական թուրքալեզու ժողովուրդների հետ, պարզ կդառնա, թե ինչպիսի հեռանկարներ են բացվում Թուրքիայի առաջ՝ օգտագործելու իր հեղինակությունը Անդրկովկասից մինչեւ Միջին Ասիա ձգվող ընդարձակ տարածքի վրա: Թուրքիան լինելով ժողովրդավարական հանրապետություն, հարազատ մնալով աշխարհիկության, տնտեսության մեջ ազատ շուկայական հարաբերությունների սկզբունքին, միութենական թուրքալեզու եւ մահմեդական հանրապետությունների համար կծառայի որպես մոդել:

Սեղաթ Էրգինի կողմից արված վերոհիշյալ դասակարգումը պարզ ցույց է տալիս, թե ԽՍՀՄ-ը առաջվա պես մնում է թուրք-ամերիկյան ստրատեգիայի ուղղվածության գլխավոր նպատակը: Ինչպես ինքը, Էրգինն է գրում, Անդրկովկասն ու Միջին Ասիան կարեւոր տեղ են գրաղեցրել Վաշինգտոնի քաղաքական ծրագրերում: Սառը պատերազմի տարիներին Վաշինգտոնը, օգտագործելով Թուրքիայի հեղինակությունը Անդրկովկասում եւ հատկապես Միջին Ասիայում, Խորհրդային Միությունը թուրքալեզու հանրապետությունների միջոցով քայքայելու փորձեր է արել: Սակայն հիմա ինչքան էլ որ սարսափելի թվա, նույն Վաշինգտոնը փորձում է օգտագործել Թուրքիայի հեղինակությունը Միութենական նույն հանրապետությունների հանդեպ, բայց այս անգամ արդեն ԽՍՀՄ-ի քայքայումը կանխելու, այդ գործընթացը հնարավորին չափով հետաձգելու մտադրությամբ:

Թուրք-ամերիկյան համատեղ ստրատեգիայի մշակման ուղղությամբ հսկայական աշխատանքներ են կատարվում հանձնաժողովների մակարդակով: Հարցը նախ քննարկվել է Վաշինգտոնում, ապա արծարծվել Անկարայում, Օզալ-Բուշ հանդիպման ժամանակ: Սակայն, Սեղաթ Էրգինի մեկ այլ հոդվածից տեղեկանում ենք, որ, նախքան Բուշի այցը, Անկարա էր ժամանել ամերիկյան մի հանձնաժողով Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարության միջազգային քաղաքականության գրծով պատասխանատու խորհրդական Պոլ Վոլֆովիցի գլխավորությամբ: Այդ հանձնաժողովի մեջ ընդգրկված էր նաեւ ԱՄՆ-ի պետքարտուղարության քաղաքականության մշակման վարչության աշխատակիցը՝ մասնագիտացած Խորհրդային Միության գծով: Պենտագոնում երբեք մարդու համարում ունեցող Վոլֆովիցը հատկապես կանգ էր առել Անդրկովկասում առկա խնդիրների վրա եւ քննարկել է Թուրքիայի անելիքները՝ կապված Միութենական թուրքալեզու հանրապետությունների աղազայի հետ: Ի դեպ, այս հարցերի նախնական քննարկումը, որի մասին մենք տեղեկանում ենք ընդամենը մեկ տարի անց, տեղի էր ունեցել անցյալ տարվա ամռանը Անկարայում, ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դիք Չեյնիի եւ Օզալի միջեւ:

Այս բոլոր քննարկումները գալիս են մի անգամ եւս ապացուցելու, թե Միացյալ Նահանգները ինչպիսի կարեւորություն է տալիս թուրք-ամերիկյան համատեղ ստրատեգիական ծրագրերի մշակմանը: Սա, որը, հակառակ սպասելիքների, նպաստելու է Թուրքիայի նշանակության հետագա աճին ԱՄՆ-ի քաղաքական ծրագրերում:

Հակոբ ՉԱՔՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

Աստղերի համահավաք

Այս տարվա նոյեմբերի 23-ին Ֆրանսիայի նորաստեղծ «Հայաստան-2000» մարզական ակումբի նախաձեռնությամբ Փարիզում կկայանա Հայաստանի եւ Ֆրանսիայի մարզական աշխարհի աստղերի եւ չեմպիոնների համահավաք: Այդ կապակցությամբ Հայաստանում է գտնվում ակումբի նախագահ Աբրահամ Հայրապետյանը:

– Պրն. Աբրահամ, գիտեմ, որ Հայաստանի մարզական բնագավառի ներկայացուցիչներից շատերը ձեզ լավ են ճանաչում, քանի որ մեկ անգամ չեք հանդես եկել Մայր հայրենիքին ծառայելու, նրա հետ արտասահմանի, մանավանդ Ֆրանսիայի մեր հայրենակիցների կապերը սերտացնելու առաքելությամբ: Ի՞նչ նպատակ է հետապնդում միջոցառումը, ո՞ւմ մտահղացումն է դա եւ, եթե գաղտնիք չէ, հրավիրվածներն ովքե՞ր են:



– Մտահղացումն իմն է, բայց այդ կապակցությամբ բանակցել եմ ակումբի 3 պատվավոր նախագահների՝ Պիեռ Ղազարյանի, Ռոբերտ Էմմիյանի եւ Սուրեն Շամշարյանի հետ: Հրավիրվածների անունները մեկնաբանության կարիք չեն զգում. Հրանտ Շահինյան, Ալբերտ Ազարյան, Վլադիմիր Եզիբարյան, Իգոր Տեր-Հովհաննիսյան, Նիկիտա Սիմոնյան, Ռոբերտ Էմմիյան, Լեւոն Ջուլֆալակյան, Գուրգեն Թութխալյան եւ ուրիշներ, թվով 28 չեմպիոն: Ես հատկապես Ֆուտբոլ շատ եմ սիրում, եւ արարացիների հետ կապերս վաղուց են: Առաջին անգամ Հայաստան եմ այցելել 1967 թվականին եւ այդ պահից մինչեւ հիմա ուշադրությամբ հետեւում եմ «Արարատի» ելույթներին: Ինքս 11 տարի եղել եմ Փարիզի հայկական մարզական ակումբի Ֆուտբոլի գրծով փոխնախագահ: Նիկիտա Սիմոնյանի հետ ծանոթացել եմ դեռեւս 1971 թվականին Ֆրանսիայում: Հետո, երբ 1973 թվականի հունվարին գտնվում էի Մոսկվայում, նա ինձ ասաց. *«Աբրահամ, ինձ ուզում եմ տրախացնել, գնում եմ «Արարատ» որպես մարզիչ, բայց, ժամանակն ասած, շատ եմ վախենում: Մեր հայերին լավ գիտես: Թիմը անցյալ տարի 4-րդ տեղն է գրավել, եթե 5-րդը գրավենք՝ ինձ կկախեն»:*

Ես ասացի՝ «Արարատին» ձեզ նման անուն ունեցող մարդ է պետք: Եւ ես երջանիկ եմ, որ 1973 թվականին Մոսկվայում անձամբ ներկա եմ եղել «Արարատ»-«Դինամո» Կիեւ գավաթային պատմական հանդիպմանը: Երբ արարացիները գավաթը պահել էին գլխավերեւում, ուրախությունից չկարողացա զսպել արցունքներս: Դա անջնջելի պահ էր եւ միայն մարզական հաղթանակ չէր:

Հետո, մեր հայկական հիվանդության համաձայն, պրոբլեմներն ավելացան, եւ Նիկիտան գնաց Երեւանից: Բայց նա ապացուցեց, որ մեծ մարդ է Ֆուտբոլում եւ հիմա էլ Ֆեդերացիայի փոխնախագահն է:

Ֆուտբոլիստներից Ֆրանսիա ենք հրավիրել Արմեն Սարգսյանին եւ հայ ժողովրդի զավակ Շուրիկ Կովալենկոյին: Հայաստանի չեմպիոնները կհանդիպեն Ֆրանսիայի չեմպիոնների հետ: Ֆրանսիացիներից հրավիրել ենք շուրջ 130 անվանի մարզիկների: Ես *պոլիտիկ* անող մարդ չեմ, սակայն իմ նպատակն է Ֆրանսիացիներին եւ հատկապես հայ պատանիներին ու երիտասարդներին ծանոթացնել հայկական սպորտի պատմությանը, նրա վառ անհատականություններին, որոնցից յուրաքանչյուրը համաշխարհային մեծության աստղ է: ■

«Հաղթը» նախապատրաստվում է

Հոկտեմբերի 14-ին մեկնարկելու է բասկետբոլի կանանց ԽՍՀՄ բարձրագույն խմբի հերթական առաջնությունը:

Հանրապետական Ֆեդերացիաների ճնշման տակ այն բաց առաջնություն հայտարարվեց: Դա նշանակում է, որ արդեն անկախություն ձեռք բերած բալթիկական պետություններից մասնավորապես Լատվիայի ներկայացուցիչը Ռիգայի SSS-ն կմասնակցի առաջնությանը: Իսկ ահա լիտվացիները (Վիլնյուսի «Կիբիրկշտիս») որոշել են ձեռնպահ մնալ:

Անցյալ տարվա 12-ի փոխարեն այս անգամ ուժեղագույնների մրցաշարում մրցապարեզ են դուրս գալու 16 թիմ:

Նախնական փուլի մրցումներն անցկացվելու են 4 տուրով, փնջային մրցաշարերով:

Այնուհետեւ առաջին 8 տեղ գրաված թիմերը վիճարկելու են առաջնության մեդալները:

Արովյանի «Հաղթ»-ը Լատվիայում անցկացրած 20-օրյա ռազմամարզական հավաքից հետո հիմա իր մարզումները շարունակում է Ծաղկաձորում:



Ահա նախնական փուլում «Հաղթի» խաղացանկը

1-ին տուր
Հոկտեմբեր. Երեւան
14-ին «Դինամո» (Վոլգոգրադ) - «Կրասնի Մոսալ» (Դոնի-Ռոստով)
«Հաղթ» - «Աշխատանքային ռեզերվներ» (Ն. Նովգորոդ)
15-ին «Դինամո» - «Աշխատանքային ռեզերվներ»
«Հաղթ» - «Կրասնի Մոսալ»
16-ին «Հաղթ» - «Դինամո»
«Աշխատանքային ռեզերվներ» - «Կրասնի Մոսալ»

2-րդ տուր
Ալմա-Աթա
22-ին «Կայրաթ» - «Հաղթ»
23-ին «Դինամո» (Նովոսիբիրսկ) - «Հաղթ»
Բիշքեկ
25-ին «Ազատ» (Բիշքեկ) - «Հաղթ»
26-ին «Ուրալմաշ» - «Հաղթ»

3-րդ տուր
Նոյեմբեր. Դոնի Ռոստով
22-ին «Սպարտակ» (Մ. մարզ) - «Հաղթ»
23-ին «Դինամո» (Կիեւ) - «Հաղթ»
25-ին «Մոլդովա» - «Հաղթ»
26-ին SSS - «Հաղթ»

4-րդ տուր
Դեկտեմբեր. Մոսկվա
23-ին ԲԿՄԱ - «Հաղթ»
24-ին «Դինամո» (Մոսկվա) - «Հաղթ»
Սանկտ-Պետերբուրգ
26-ին «Էլեկտրոսիլա» - «Հաղթ»
27-ին «Գորիզոնտ» - «Հաղթ»

Վերջին տարիներին Թուրքիայի առաջնակարգ ֆուտբոլային ակումբները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում աշխարհի հանրահայտ ֆուտբոլիստների նկատմամբ: Թուրքական ակումբներում հանդես են եկել գերմանացի Թոնի Շումախերը, բրազիլացի Սերժինյոն: Հատկապես մեծ է հարավսլավացի վարժեսների թիվը: Այդ երկրի հավաքականի նախկին դարպասապահ Սիմովիչը տարիներ շարունակ պաշտպանել է «Գալաթասարայի» դարպասը: Վերջերս սկսվել է ռումինացի, բուլղարացի եւ լեհ ֆուտբոլիստների ներհոսքը: Թուրքիայի ազգային հավաքականի մարզիչը հանրահայտ Ջեզ Պիոնտեկն է: Յուղ Դերվալը տարիներ շարունակ մարզել է «Գալաթասարայ» թիմին: ■

Բանիկը վարում է Սուրեն ԱՍԼԱՆՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

«Մենք այլեւս քաղաքական ոստիկանության կարիք չունենք»

ասում է նախկին չեկիստ Օլեգ Կալուգինը

ՊԱԿ-ի նախկին գեներալ Օլեգ Կալուգինը, որ 1972-1980 թթ. հակահետախուզության պետն էր, մինչեւ 1987 թ. Լենինգրադի ՊԱԿ-ի երկրորդ դեմքը, ասիճանազրկվել եւ հալածանքների էր ենթարկվել պետական գաղտնիքներ տարածելու պատրվակով, այսօր կրկին վերադառնում է Ձերժինսկու հրաղարակի վրայի շենքը: Նա բացատրում է, թե ինչպե՞ս եղավ, որ ՊԱԿ-ի պարագլուխը հայտնվեց խռովարարների թիմում:

ՕԼԵԳ ԿԱԼՈՒԳԻՆ.- Այդ աղտարաչիկները միշտ էլ կույր են եղել: Նրանք ուրիշ աշխարհում են աղրում, կարծես թե ուրիշ լեզվով են խոսում: Վլադիմիր Կրյուչկովը չէր նկատում, թե ինչպես են իր ստորադրյալները ամում: Իրականում ՊԱԿ-ի անձնակազմի մեծ մասը, հիմնականում երիտասարդներ, բավականին ժամանակ էր չէին ընդունում այլեւս կազմակերպության պահպանողականությունը: Մեր «չեկիստները» պերեստրոյկա էին ուզում իսկական, խոր: Կրյուչկովը այս հարցում ամբողջապես մի կողմ էր կանգնած:

«ԼԸ ՊՈՒԵՆ».- **Դուք չզարմացա՞ք, որ դուք մասնակցեց պետական հեղաբերմանը:**

- Ես նրան միշտ համարել եմ վախկոտ ինքն իր վրա անվստահ: Նրա մասնակցությունը ես բացատրում եմ սոսկ Անատոլի Լուկյանովի ներկայությամբ: Լուկյանովը հեղինակություն էր, ուրեմն նաեւ ունակ նրան ծածկելու: Առանց Լուկյանովի, Կրյուչկովը երբեք այդպիսի արկածախնդրության մեջ չէր նետվի: Պարզապես նա վարվել է աղտարաչիկի նման, ենթարկվելով հրամաններին: Նույնը՝ Յանաեւը, որ բացարձակապես խելք չուներ եւ բոլոր պատգամավորների ծաղրանքի առարկան էր: Ինչ վերաբերում է Յազովին, երբ օգոստոսի 20-ին նրան առաջարկեցին վերանայել իր վրձիռը, նա պատասխանեց, թե ինքը նախ-

ւառաջ զինվոր է եւ պարտավոր է մինչեւ վերջ ենթարկվել հրամաններին:

- Ինչի՞ է նմանվելու նոր ՊԱԿ-ը:

- Դուք խոսում եք աղաոնի ժամանակով, սակայն ներկան արդեն նրա կոկորդից բռնել է: Պետության մեջ իսկական այդ պետության «բանդումը» սկսվեց խորովության հենց հաջորդ օրը, երբ Միխայիլ Գորբաչովը հանեց պահակախումբը ՊԱԿ-ի ինքնորդ բաժնի տնօրինությունից եւ դրեց իր տրամադրության տակ: Նաեւ՝ երբ ՊԱԿ-ի զորքերը հանձնեց բանակին: Վերջ, ՊԱԿ-ը այլեւս չի ունենա իշխանության իր նախկին մենաշնորհը, նա այլեւս միայնակ չի կառավարի նախագահական հաղորդակցությունները, իսկ սրանից հետո բանակը կգրաղվի ռազմական հակահետախուզությամբ:

- Տեղային առումով ինչպիսի՞ կլինեն ՊԱԿ-ի բարեփոխումները:

- Պետք է լուծարել քաղաքների մակարդակով ՊԱԿ-ի բոլոր ներայացուցչությունները: Օրինակի համար, Լենինգրադում ՊԱԿ-ի քաղաքային վարչությունը համակարգում է շրջկոմների հիմքի վրա հենված հիսուն այլ մասնաճյուղերի գործունեությունը: Դա սպաների բացարձակապես անօգուտ բանակ է: Դրանց բանուգործն այն է, որ շրջկոմի առաջին քարտուղարին տեղեկացնեն, թե ժողովուրդը ինչ տրամադրություն ունի նրա նկատմամբ: Պետք է արմատախիլ անել այդ մոլախոտը, ինչը նշանակում է, որ տասնյակ հազարավոր գործակալներ կմնան առանց աշխատանքի:

- Ի՞նչ պիտի անեք դրանց հետ:

- Դրանք սիրողած կլինեն գյուղատնտեսությամբ զբաղվել: Անկասկած, նրանց մի կտոր հող կտրվի, եւ նրանք Ֆերմեր կդառնան: Կամ էլ մոդային կհետեւեն եւ համատեղ ձեռնարկություն կբացեն: Մենք իսկապես պետք չունենք:

«Լը Պուենթ», 13 սեպտեմբեր 1991

30 հազարանոց հանրահավաքը պահանջեց Զվիադ Գամսախուրդիայի հրաժարականը

Սեպտեմբերի 16: Թբիլիսիում տեղի ունեցած ընդդիմադիր ուժերի միացյալ հանրահավաքում մոտ 30 հազար մասնակիցները պահանջեցին Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիայի հրաժարականը: Նրանք նաեւ պահանջեցին վերացնել նախագահության ինստիտուտը հանրապետությունում եւ անցկացնել խորհրդարանի նոր ընտրություններ:

Հանրահավաքի մասնակիցները հանրապետության հրապարակից շարժվեցին դեպի կառավարական տուն, որ տեղի էր ունենում մեկ այլ հանրահավաք, որի մասնակիցները աջակցում էին նախագահին:

Այդ հանրահավաքում ելույթ ունենալով, Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ Ակակի Ասաթիանին ընդունեց, որ իրավիճակը քաղաքում նորմալ չէ եւ դրանում մեղադրեց ընդդիմությանը: Սակայն, նրա խոսքերով, Գերագույն խորհուրդն ու նախագահը պատրաստ են երկխոսության միայն այն դեպքում, եթե ներկայացվեն հիմնավորված ընդունելի պահանջներ: Ելույթ ունեցավ նաեւ հանրապետության նախագահ Զվիադ Գամսախուրդիան, որը, մասնավորապես, արտահայտվեց ինքնապաշտպանության քաղաքացիական կոմիտեներ ստեղծելու օգտին:

Միլիցիան թույլ չտվեց, որպեսզի բախումներ տեղի ունենան Վրաստանի նախագահի կողմնակիցների եւ հակառակորդների միջեւ: Մինչդեռ ընդդիմությունն աջակցող հանրահավաքներ կայացան Վրաստանի մյուս քաղաքներում: Ամենամարդաշատ հանրահավաքը տեղի ունեցավ Բաթումում: Նրա մասնակիցները պահանջեցին նախագահի «դրածո» Աջարիայի Գերագույն խորհրդի նախագահ Ասլան Աբաշիձեի հրաժարականը:

Սեպտեմբերի 17: Թբիլիսիում նորից սրվեց իրավիճակը: Առիթը հանդիսացավ այն, որ սեպտեմբերի 16-ին, ուշ երեկոյան ձերբակալվեց Վրաստանի ազգային-դեմոկրատական կուսակցության ղեկավար Գեորգի Ճանտուրիան:

Գ. Ճանտուրիան, ինչպես նաեւ ազգային-դեմոկրատական կուսակցության վարչության անդամներ Իրինա Սարիշվիլին եւ Վախթանգ Թալախաձեն ձերբակալվեցին տեղական ժամանակով երեկոյան ժամը 11-ին մոտ, այն բանից հետո, երբ ինքնաթիռը, որով նրանք մեկնում էին Մոսկվա, թռիչքից 20 րոպե անց ետ վերադարձվեց Թբիլիսիի օդանավակայան: Գ. Ճանտուրիան մեկնում էր Մոսկվա ԱՄՆ դեսպանի հետ հանդիպելու համար: Նա մտադիր էր նաեւ սեպտեմբերի 19-ին անցկացնել մամլո ասուլիս: «ԻՖ»-ի թղթակցին տված հարցազրույցում Վրաստանի գլխավոր դատախազ Վախթանգ Ռազմաձեն հայտարարեց, որ ձերբակալման սանկցիա չի տվել եւ նրանց ոչ մի մեղադրանք ներակայացված չի եղել:

Վրաստանի ՆԳՆ-ում «ԻՖ»-ի թղթակիցը չկարողացավ ստանալ ոչ մի լրացուցիչ տեղեկություն: Մինչդեռ Գ. Ճանտուրիայի կողմնակիցները այնուամենայնիվ մտադիր են մամլո ասուլիս անցկացնել Մոսկվայում:

Ինչպես հայտնի դարձավ «ԻՖ»-ին, ձերբակալվածներից Վախթանգ Թալախաձեն երեկ ազատ է արձակվել:

Հանդես գալով Թբիլիսիում կայացած մամլո ասուլիսում, Վ. Թալախաձեն հայտնեց, որ Գ. Ճանտուրիան եւ Իրինա Սարիշվիլին (նրա կինը) գտնվում են հանրապետության ՆԳՄ մեկուսարանում: ■

Ռուսաստանի գլխավոր դատախազը օգոստոյան խռովության կազմակերպիչների գործի մասին

Ռուսաստանի գլխավոր դատախազ Վալենտին Ստեղանկովը հաղորդեց, որ օգոստոյան պետական հեղաբերման կազմակերպիչների գործի նախնական հետաքննությունը պետք է ավարտվի եռամսյա ժամկետում: Սակայն դատավարության սկզբի նախնական ժամկետը հիմա դժվար է որոշել, քանի որ դատաքննությունները կարող ծանրաբանել հետաքննության նյութերի ինչքան ցանկանան:

Արգելոցների հետ հարցազրույցի ժամանակ գլխավոր դատախազը հաղորդեց, թե ըստ բժիշկների եզրակացության, հիվանդանոցում գտնվող Անատոլի Լուկյանովը առողջ է: Սակայն որոշված է չբռնել նրան քննչական մեկուսարան վերադարձնելու հարցում, մինչեւ լիակատար բժշկական հետազոտումը:

Վ. Ստեղանկովի վկայությամբ, այսօրվա դրությամբ քրեական պատասխանատվության են ենթարկվել եւ ձերբակալվել ԽՍՀՄ ՊԱԿ-ի բարձրաստիճան 4 աշխատակիցներ: «ԲՄՊ-536» անձնակազմի անդամները, որոնց մեղքով օգոստոսի 21-ի գիշերվանից «Սպիտակ տան» պաշտպանները, ձերբակալված չեն եւ քրեական պատասխանատվության չեն ենթարկվել: Նրա խոսքերով, հետաքննությունը դեռ չի որոշել, թե արդյոք նրանց գործողությունները ուղղված են եղել մարդկանց սպանելու:

Իսրայելի Կնեսետի պատվիրակությունը Մոսկվայում

ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի հրավերով Մոսկվայում էր գտնվում իսրայելական կնեսետի (խորհրդարանի) պատվիրակությունը: Նրա կազմում էին ներգաղթի եւ տեղավորման կոմիտեի անդամ Իոսեֆ Բեյլին՝ Աշխատանքի կուսակցության անդամ, Իսրայելի արտգործնախարարության քաղաքական նախկին դիրեկտոր, Ուզի Բարամը՝ Աշխատանքի կուսակցության նախկին գլխավոր քարտուղար եւ Գերշոն Շաֆատը՝ կնեսետի պատգամավոր: Պատվիրակությունը գլխավորում էր «Լիկուդ» կուսակցության անդամ, խորհրդարանի կոմիտեի նախագահ Միխաել Կլայները:

Վերջին քառորդ դարում սա նման պաշտոնական պատվիրակության առաջին այցն է Մոսկվա: ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ քաղաքական բոլոր կապերը խզվել էին 1967 թ.:

Ինչպես հայտնի դարձավ «ԴՀ»-ին, այցի հիմնական նպատակը Իսրայելի եւ Ռուսաստանի խորհրդարանների միջեւ կապերի ամրապնդումն էր ներկայումս ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի միջազգային գործերի եւ արտաքին տնտեսական կապերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Լուկինի գլխավորությամբ մի պատվիրակություն գտնվում է Իսրայելում), երկկողմ դիվանագիտական հարաբերությունների կարգավորումը, փոխշահավետ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացումը: Այցի նպատակներից մեկն էլ հրեաների՝ ԽՍՀՄ-ից արտագաղթի հետ կապված հարցերի քննարկումն էր: Մոսկվան այլեւս չի խոչընդոտում դրան: Սակայն դեռեւս չլուծված խնդիրներ կան՝ կապված Մոսկվա-Իսրայել ավիաուղղի հետ, ինչպես նաեւ հրեաների տեղավորման հետ:

Պատվիրակությունը հանդիպեց Սերգեյ Կովալյովին, որը նախկինում քաղբանտարկյալ էր, այժմ ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ եւ Եվգենի Համբարձումովին, որը ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի միջազգային գործերի եւ արտաքին տնտեսական կապերի հանձնաժողովի նախագահ տեղակալն է:

Ինչպես հայտնի դարձավ «ԴՆ»-ին, երեկ Կնեսետի պատվիրակությանը ընդունել է Ա. Բելոնոգովը: Քննարկվել են բոլոր այն հարցերը, որոնք նախատեսված էին պատվիրակության այցի ծրագրով:

Երեկ ավարտվեց պատվիրակության այցը ՌԽՖՍՀ:

Պատվիրակության ղեկավար Մ. Կլայները նշեց, թե *«մենք այդ հարցերում առաջնությունը տալիս ենք Խորհրդային Միությանը, ոչ թե Ռուսաստանին»:* ■

«Կուրիլյան կղզիները Ռուսաստանի անբաժանելի մասն են»

Դրա մասին է ասվում Ռուսաստանի կառավարությանը եւ ճապոնացի ժողովրդին հղած Հարավ-Կուրիլյան շրջխորհրդի նախագահության դիմումի մեջ:

Ինչպես պնդում են դիմումի հեղինակները, վերջերս Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը եւ խորհրդարանի ղեկավար Ռուսլան Խասբուլատովը հայտարարություններ են արել՝ ճապոնիային այսպես կոչված «հյուսիսային տարածքները» վերադարձնելու հնարավորության եւ պատրաստակամության մասին:

«ԽՍՀՄ եւ ճապոնիայի նախկին ղեկավարների քաղաքական արկածախնդրությունը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ եւ հետո չի կարող հիմք հանդիսանալ «հյուսիսային տարածքների» խնդրի նախատեսվող լուծման համար»,- ասվում է դիմումի մեջ:

Հարավային Կուրիլների շրջխորհրդի նախագահությունը կոչ արեց համաշխարհային հասարակությանը **«հաշվի առնել կղզիների բնակչության իրավունքներն ու շահերը եւ ավելի մանրամասնորեն ուսումնասիրել տարածքային խնդրի սոցիալ-տնտեսական ասպեկտները»:** ■

Ֆրանսիայի պաշտպանության նախարարը Ուզբեկստանում

Կիրակի գիշերը Տաշքենդ ժամանեց Ֆրանսիայի պաշտպանության նախարար Պիեռ Ժոխը, որ շրջագայում է Խորհրդային Միությունում: Այցի ծրագրով նախատեսվում էին հանդիպումներ Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովի, Թուրքեստանի ռազմական օկրուգի ղեկավարության հետ, ինչպես նաեւ ուղեւորություններ Սամարղանդ եւ Բուխարա:

Նախարարը Տաշքենդ ժամանեց Բոյկոնուրի տիեզերակայանից: Պիեռ Ժոխը ծանոթացավ բազմակի օգտագործման «Բուրան» տիեզերանավին, դիտեց տիեզերագնացների պատրաստման կենտրոնը եւ մեկնարկային հրապարակները: ■

Արտյոմ Տարասովը ցած է դնում ժողովրդական ծառայությունը

Ռուսաստանի ժողովրդական պատգամավոր Արտյոմ Տարասովը, որը ներկա պահին գտնվում է արտասահմանում, ցած դրեց պատգամավորի լիազորությունները:

Այդ հայտարարության մեջ Արտյոմ Տարասովը նշեց, որ Ռուսաստանին է հանձնում **«Գորբաչովի եւ Պավլովի ադոռինի հրամանով սաստեցված եւ «Իսկոկ» ասոցիացիայի հաշվին եղած 9 միլիոն դոլլարը «կարիքները բավարարելու համար»:**

Նա հայտարարեց, թե հնարավոր չէ աշխատել Խորհրդային Միությունում քանի դեռ ԽՍՀՄ նախագահի պաշտոնը զբաղեցնում է Միխայիլ Գորբաչովը, **«որն այլանդակեց իմ եւ վստահության մեջ գտնվող հարյուր հազարավոր մարդկանց ճակատագիրը»:** ■

Մարդահամար Իրանում

Սեպտեմբերի 11-ից Իրանում անց է կացվում նոր մարդահամար, որը տեւելու է 25 օր: Իրանի պետական նախագահ պրն. Ջանջանին, որ միաժամանակ նշանակվել է մարդահամարի անցկացման պատասխանատու անձ, նշեց, որ այդ միջոցառումը կընդգրկի 224 քաղաք, 523 գավառ եւ 7 հազար գյուղ: Նշենք, որ նախորդ 1986 թ. անցկացված մարդահամարի ժամանակ, որ համընկավ իրանա-իրաքյան զինաթափման հետ, մարդահամարից դուրս էին մնացել երկրի տարբեր շրջանների բազմաթիվ քաղաքացիներ: Պրն. Ջանջանին հույս է հայտնում, որ այս անգամ նման բացթողում տեղի չի ունենա: Ջանջանին նշեց, որ մարդահամարի ընթացքում ազգաբնակչությանը անվճար կտրվի հակաբեղմնավորման միջոցներ:

Իրանի վիճակագրական կենտրոնի բարձրաստիճան պատասխանատու պրն Ջամշիդի ներկայացրած նախնական տվյալների համաձայն, Իրանի բնակչությունը մոտ 60 միլիոն է, այլ կերպ ասած՝ 5 տարվա ընթացքում երկրի բնակչությունն աճել է 10 միլիոնով: Ջամշիդին զգուշացրել է, որ եթե այդ ընթացքը շարունակվի, առաջ կառավարությունն այլեւս չի կարող իրականացնել բնակչության աճը կանխելու վերաբերյալ մշակված ծրագիրը: Ըստ Իրանի ռադիոյի, կառավարությունը մտադիր է բնակչության աճի գործակիցը նվազեցնել մինչեւ 3 տոկոս: Սակայն որոշ հոգեւորականներ կառավարության կողմից բնակչության աճը կանխելու նպատակով անցկացվող միջոցառումները համարում են հակաիսլամական: ■

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
phone: 58-1841, fax: (8-852)56-2941, telex: 243267 SULA SU
Խմբագիր Յ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Դասիչ 69149
«Պարբերական» հրատարակչություն
Լուսանկարները interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների
Macintosh համակարգչային շարուածքը՝ Ռ.Ա.Կ. ճանաչողական եւ տեղեկատվության կենտրոնի

digitised by A.R.A.R.@